

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 76ԳՊ ՏԱՐԻ, ԹԻԻ 91 (21433) ՇԱՐԱԹ, 28 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷՁ

ԹՈՒՐԵՒՆ

ՆԵՐՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿ՝ ԲԻՐՏ ԸՄԲՈՍՆԵՐՈՒՆ ԴԵՍ...

ՊՈԼԻՍ, 27 (ԱՅՓ).- Թուրքիոյ ներքին գործոց նախարար Ապտիլթաիլ Աքսու Ուրբաթ օր յայտարարած է, թէ կառավարութիւնը «նոր եւ շատ յորձ» քայլի մը դիմած է «ընկերային խաղաղութեան» հաստատման ի խնդիր: Ըստ կառավարութեան ներկայացուցած բանաձեռի մը նախագիծին, անկախ ներում կ'առաջարկէ քիւրտ ըմբոսներուն, որոնց դէմ արձակուած վճիռները նաեւ կը կրճատէ, զանոնք քաջալերելու համար, որ զէնքերը վար դնեն: Ներում պիտի շնորհուի անոնց՝ որոնք ծանրակշիռ ռիսկներ չեն գործած եւ որոնք իշխանութիւններուն անձնատուր եղած են: Վայրագ արարքներ գործած քիւրտներուն դէմ արձակուած վճիռները մեծ համեմատութեամբ պիտի նուազին, եթէ անոնք իրենց ընդլայնակէս գործունէութիւններուն մասին տեղեկութիւն փոխանցեն:

ՈԱՅՍ ԱՅՍՕՐ ԿԸ ՀԱՍՆԻ ԻՍՐԱՅԷԼ

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ՀԱՄԱՉԱՅՆԻՆ ԶԻՆԱԳՈՒԼԻ ՄԸ ՄԱՍԻՆ, ՄԻՆՉ ԻՍՐԱՅԷԼ Կ'ՈՐՈՇԷ ՀԵՌԱՆԱԼ ԿԱԶՄՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ԿԱՐԳ ՄԸ ՇՐՋԱՆՆԵՐԷ...


Մինչ Համաս, Իսլամական ժիհադ եւ Ֆաթհ Համաձայնութիւն կը գոյացնէին քանի մը օրէն Հրապարակ-ուելիք զինադուլի յայտարարութեան մասին, Կազախ մէջ իսրայէլեան ներխուժումի մը ընթացքին անմեղ պահեստիցիներ կը սպաննուէին, թէեւ Իսրայէլ կը յայտարարէր, թէ պիտի քաշուի Կազախ եւ Այսրյորդանանի կարգ մը շրջաններէն, ինչպէս նաեւ Բեթղեհէմէն, քայլ մը, զոր անմիջապէս ողջունեց Ճորճ Պուշ: Այս բոլորը տեղի կ'ունենային նաեւ այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի ազգային անվտանգութեան հարցերու խորհրդատու Քոնտոլիզա Ռայս կը պատրաստուի շրջան այցելութեան:

Համասի ղեկավար Ապտէլ Ազիզ Ռանթիսի ըսաւ, որ իր կազմակերպութիւնը, Իսլամական ժիհադ եւ Ֆաթհ Համաձայնութիւն մը գոյացուցին միացեալ փաստաթուղթի մը մասին, որ կը ներկայացնէ երեք շարժումներու կեցուածք: Ռանթիսի ըսաւ, որ փաստաթուղթը պիտի հրատարակուի յառաջիկայ երկու օրերուն ընթացքին: Կ'ենթադրուի, որ յայտարարութեան լոյսին տակ գործադրութեան դրուի զինադուլ մը: Ռանթիսի աւելցուց, որ երեք շարժումները Համաձայնութեան փաստաթուղթը պիտի փոխանցեն Եասէր Արաֆատի պահեստիներէն իշխանութեան, Եգիպտոսի եւ հարցին առընչակից այլ կողմերու:

Իսլամական ժիհադի ղեկավար Մոհամէտ Հինտի իր կարգին հաստատեց լուրը, զի ինչ տարով, որ իր շարժումը կ'ուզէ ինքնազոհութիւն եւ անդորրութիւն հաստատել: Հինտի աւելցուց, որ ներքին քննարկումները ավարտած են եւ Համաձայնութիւն մը գոյացած:

ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷՁ

## Շ. Յ. Դ. ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ



18 Յունիս 1987ին Եւրոպական խորհրդարանը կը ճանչնար Հայկական Յեղասպանութիւնը, Սթրասբուրգի մէջ:

Չորեքշաբթի, 18 Յունիս 2003ին, Շ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի եւ Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբի նախաձեռնութեամբ, պաշտօնական ընթացքի մը ընթացքին հանդիսաւորապէս նշուեցաւ այս իրադարձութեան 16ամեակը, Փարիզի «Փրէս Բլապ Տը Ֆրանս»-ի մէջ, եւրոպացի եւ ֆրանսացի քաղաքական հանրածանօթ ղէմքե-

րու, մտաւորականներու եւ մամուլ ներկայացուցիչներու ներկայութեամբ:


Շ. Յ. Դ. անունով ներկայութեան բարի գալուստի խօսք ուղղեց Անահիտ Գրիգորեան, որ անդրադարձաւ Եւրոպական խորհրդին կողմէ 1987ին որդեգրուած բանաձեռին, ընդգծելով, որ բանաձեռը թուրքիոյ Եւրոպա մուտքը կը պայմանաւորէր Հայկական Յեղասպանութեան ճանաչումով: Ապա խօսք առաւ Շ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մուրատ Փափագեան, որ ողջունեց

ետք ներկաները, անդրադարձաւ 2002ին Թուրքիոյ Եւրոպա մուտքի թղթածրարին վերաբարձու մին եւ այս ուղղութեամբ Շ. Յ. Դ. Ի տարած աշխատանքներուն: «Իրրեք քաղաքական կուսակցութիւն, մենք կը նպատակադրենք ամբողջութեամբ լծուել Դեկտեմբեր 2003ին թուրքիոյ Եւրոպա մուտքի քննութիւնը պատրաստող եւրոպական վեհաժողովի աշխատանքներուն: Պէտք է թույլ ըլլալ թուրքիոյ նկատմամբ, ըսաւ Փափագեան, աւելցնելով, որ Շ. Յ. Դ. կը պահանջէ Եւրոպայի կողմէ, որոշուած չափանիշներու ամբողջական կիրարկումը, նկատի ունենալով, որ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը եւ անոր հետեւանքները մաս կը կազմեն Քոփէնհագենի չափանիշներուն:

Ապա, Գէորգ Քեփենկեան եւ Ժիւլ Մարտիրոսեան, իրեն 1987ականներուն Եւրոպական խորհրդարանին մէջ Հայ Դատի յարաբերական եւ քաղաքական աշխատանքներու պատասխանատուներ, ներկայացուցին օրին Յեղասպանութեան ճանաչման պայմաններն ու գործունէութիւնը: Խօսք առաւ Հանդիսութեան յատուկ կերպով հրաւիրուած Հանրի Սապի, որ 1987ին Եւրոպական խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքներու հիմնական դերակատարներէն էր: Իր խօսքին մէջ Սապի անընդունելի նկատեց Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը եւ ըսաւ, որ Հայ ժողովուրդը պէտք է անպայման վերադառնայ իր պատմական հողերը: Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի անդամական ակնարկով մը ներկայացուցին Թուրքիոյ Եւրոպա մուտքի գործընթացը: Ներկայացուցեցան Սթրասբուրգի (1987), Քոփէնհագենի (1993), Հելսինքիի (1999) եւ Քոփէնհագենի 2002ի վեհաժողովներու եզրակացութիւնները՝ Թուրքիոյ անդամակցութեան շուրջ: Իր կարգին, Շ. Յ. Դ. Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի տնօրէն Լօրան Լէյլէֆեան ներկայացուց 5 Յունիս 2003ին

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՁ

## ՆԱԽԱԳԱՅՆԵՐ ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ԵՒ ՔՈՉԱՐԵԱՆ ՈՒՆԵՑԱՆ ԴՈՆՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի զլխաւորած պատուիրակութիւնը պաշտօնական երկօրեայ այցելութեան մը համար երէկ հասաւ Վրաստան: Թիֆլիսի օդակայանին մէջ Հայկական պատուիրակութիւնը դիմաւորեց Վրաստանի նախագահ Խոււարտ Շեւարտնաձէ: Հայկական պատուիրակութեան մաս կը կազմէին Հայաստանի արտաքին գործոց, զիւղատնտեսութեան, փոխարժամիջոցներու եւ հաղորդակցութեան, մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերու նախարարները եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներ:

Երէկ Թիֆլիսի մէջ կայացաւ Հայաստանի եւ Վրաստանի նախագահներու դռնփակ հանդիպումը: Անոնք քննարկած են քաղաքական եւ տնտեսական երկկողմանի յարաբերութիւններուն եւ շրջանային կացութեան առնչուող հարցերը: Նախագահներու հանդիպումէն ետք տեղի ունեցան ընդլայնուած կազմերով բանակցութիւններ: Ստորագրուեցան տեղեկատուութեան մարզին մէջ Համազորակցութեան միջկառավարական Համաձայնագիր եւ մշակոյթի, կրթութեան, գիտութեան եւ մարմնակրթութեան բնագաւառին մէջ գործակցութեան ծրագիրը:

Նախագահներ Քոչարեան եւ Շեւարտնաձէ տուին մամուլի միացեալ ասուլիս մը: Շեւարտնաձէ ընդգծեց Հայ-Վրացական միջկառավարական յանձնաժողովի դերակատարութիւնը՝ երկու երկիրներուն միջեւ առկայ խնդիրներու լուծման հարցին մէջ: Նախագահները յայտնեցին, որ իրենց հանդիպումին ընթացքին շրջանային, տնտեսական, հաղորդակցութեան եւ Եւրոպայի հետ Համարկման թեմաներէն անկախ՝ մեծ ուշադրութեամբ արծարծած են նաեւ երկու երկիրներուն միջեւ մշակութային գործակցութեան հետեւկարները: Անոնք բնական համարեցին որոշ հարցերու գծով երկու երկիրներու արտաքին յարաբերութիւններու ուղղութիւններուն տարբերութիւնները, նշելով, որ երկու երկիրներուն ուղղուածութիւնը եւրոպական առումով կը համընկնի իրարու:

Հայաստանի նախագահը այսօր հանդիպում կ'ունենայ Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Պուրճանատէի հետ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ մաս կը կազմէ Վրաստան այցելող Հայկական պատուիրակութեան, Թիֆլիսի օդակայանին մէջ յայտարարեց, թէ հանդիպումներուն ընթացքին պիտի քննարկուին նաեւ ջաւախքահայութեան վերաբերող հարցեր, յատկապէս Ջաւախքի ընկերային-տնտեսական վիճակին բարելաման համար Հայաստանի օժանդակութեան հետանկարները:

**BUSAN FOOTWEAR INDUSTRY PROMOTION CENTER**  
**KOREA FOOTWEAR INTERNATIONAL**

**KOREA FOOTWEAR INTERNATIONAL**  
 June 30 th, 2003  
 19:00-21:00

On the occasion of the visit of the Korean delegation led by the Vice Mayor of Busan City Govt. and the CEO of BFIP Center, Korea Footwear International has the pleasure to invite interested traders & parties to examine first hand Korean samples and conduct one on one negotiations.

**Over 500 samples will be on display**

ԶՈՐԵՄԻ ԿԵՆ ԱՆԵՐՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՈՒՆԵՆՈՂ ԲՈՂՈՐ ԽՅԱՎԱԿԱՆ ԿՕՉԻԿՆԵՐՈՒ ԵՐԿՐԱՅԱԳՈՒՄ ԵՒ ԳՈՎԱԳՐՈՒՄ ԻՆՏԵՐԵՍԱՆԵՐԻ ԿՈՄՊԻՆԻՏԻԱՆ ԻՐ ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՆՈՒՄԻ ՄԸ:

Ֆանար - Ս. Գոփսիսեանց վարժարանի դիմաց, KMCI կեդրոնին մէջ:

For further information contact Korea Merchandise Center Int. (KMCI), Fanar-Main Road next to Justice Palace, Tel: 03 . 506 400 / 348 220 / 595 975  
 E-mail: kfii@sodetel.net.lb, kmci@arzo.com

**ԱՐԶՆԻ ՉՈՒԿԱՅԻ ԿՐԱՅ Է ԸՆՅԱՍՏԱՆԵՆ ՆՈՐ ԸՆՏԱՆ**

**ARZNI**

**NATURAL MINERAL SPRING WATER**

«ԱՐԶՆԻ» ԲՆԱԿԱՆ ԿԱՉՈՎ ԸՆՅԿԱԿԱՆ ԶՈՒՐԸ

**CHLORIDE HYDROCARBONATE SODIUM SILICATE MINERAL WATER**


«ԱՐԶՆԻ» Ձեր առողջութեան համար ուղղակի աղբիւրն է հանքային ջուրը: Դրական ազդեցութիւն ունի ստամոքսային համակարգին վրայ: Թելադրելի է ստամոքսի բորբոքումէ, աղիքային հիւանդութիւններէ, լեարդի, փայծաղի եւ ստամոքսային այլ հարցերի տառապողներուն:

Sole Agent in Middle East SAHALCO, Beirut-Lebanon  
 Tel.: 03/201957  
 03/201967  
 Tel./Fax: 04/71 2409

**www.arzni.am** ԽՄԵՅԷՔ «ԱՐԶՆԻ» ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԹԵՐԻ ՌՈՏ ԼԱՐՍԵՆ ԺԱՄԱՆԵՑ ԼԻԲԱՆԱՆ

Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացի ՄԱԿի յատուկ պատուիրակի թերի Ռոտ Լարսեն երէկ Ժամանակեց Լիբանան եւ Հանդիպումներ ունեցաւ իշխանութեան երեք պետերուն, ինչպէս նաեւ արտաքին գործոց նախարար Թան Օպէյտի հետ:



Պապատայի մէջ Լարսեն ընդունուեցաւ նախագահ զօր. Էմիլ Լահուտի կողմէ: Նախագահ Լահուտ շեշտեց, որ Լիբանան միշտ կը գործակցի Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացին առնչուած թեմաքի գործընթացին հետ: Ան նկատեց, որ պաղեստինցի ժողովուրդին եւ պաղեստինեան ղեկավարութեան զէմ իսրայէլեան բռնարարները կ'ապացուեն նշեալ մտահոգութիւնը:

Լարսեն շեշտեց, որ Լիբանանի վերեւ եւ արձաւանդուած սահմանային խախտումները կը նկատուին լիբանանեան գերիշխանութեան եւ ՄԱԿի Ապահովական խորհուրդի միջազգային բանաձեւերու բռնարարութիւն: Ան աւելցուց նաեւ, որ Հարաւային Լիբանանի ազատագրութեամբ ՄԱԿ տաճակին ազատագրուած գիւղերուն մէջ իր խոստումները չէ կատարած:

Իր կարգին, Լարսեն շեշտեց խաղաղութեան գործընթացի յաջողութեան անհրաժեշտութիւնը, հիմնուելով խաղաղութեան ճամբու քարտէսի ծրագրերին վրայ:

Լարսեն ընդգծեց նաեւ, որ ՄԱԿ ամէն ջանքի գործ պիտի զննէ, որպէսզի խաղաղութիւնը ըլլայ արդար եւ ամբողջական ընդգրկելով Լիբանանն ու Սուրիան: Ան աւելցուց նաեւ, որ Լիբանանի օդային սահմաններու խախտումին իմաստով ՄԱԿ իր կարգին մտահոգ է:

Լարսեն կոչ ուղղեց բոլոր կողմերուն՝ նկատուենալ շրջանային ներկայ պայթուցիկ կացութիւնը եւ զգուշութեամբ վարուիլ Հարցերուն հետ:

Լարսեն խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրըրիի հետ քննարկեց շրջանային իրադրութիւնները, ինչպէս նաեւ Հարաւային Լիբանանի ջլուրերու Հարցը:

Հանդիպումին ներկայ գտնուեցաւ Հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրը:

Լարսեն Գորայթէ մի մէջ Հանդիպում մը ունեցաւ վարչապետ Ռոֆիք Հարիրիի հետ: Քննարկուած իր առարկան դարձան շրջանային իրավիճակը եւ արձանագրուած զարգացումները:

Լարսեն Հանդիպում մը ունեցաւ նաեւ արտաքին գործոց նախարար Թան Օպէյտի հետ:

Հանդիպումին քննարկուեց շեշտուեցաւ խաղաղութեան գործընթացի ծրագրին նկատմամբ, որ վերջ կը գտնէ երբ Միջին Արեւելքի մէջ գործադրուի արդար եւ ամբողջական խաղաղութիւն, հիմնուած՝ ՄԱԿի Ապահովական խորհուրդի որոշումներուն վրայ»:

ՎԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՍԱԿԵՐ

Հաղորդակցութեան միջոցներու նախարար Թան Լուի Քըրտահի երէկ ճշդեց հետաձայնային հաղորդակցութեանց նոր սակերը, հետեւեալ ձեւով.

Ա.- Տեղական հաղորդակցութեան սակը կ'արձանագրէ 9 Լ. ոսկիի վաւելում, այսինքն՝ հաղորդակցութեան վայրկեանը 40 Լ. ոսկիէն բարձրացած է 49 Լ. ոսկիի:

Բ.- Հեռաձայնի յատուկ գիծ ունենալու համար փոխան 420 հապար Լ. ոսկիի կարելի է ստանալ 210 հապար Լ. ոսկիով:

Գ.- Համացանցի գործածութեան յատուկ հեռաձայնային թիւ ստանալու համար փոխան 420 հապար Լ. ոսկիի վաւել 50 հապար Լ. ոսկի:

Դ.- Հեռախօսային հաղորդակցութեան գործածութեան պարտադիր սակ ճշդուած է 20,000 Լ. ո., իսկ համացանցի յատուկ՝ 15,000 Լ. ոսկի:

Ե.- Միջազգային հաղորդակցութեան պարագային սակը վայրկեանի վրայ պիտի նուազի 35 առ հարիւրով:

Զ.- Պիտի հրապարակուին տեղական եւ միջազգային հաղորդակցութիւններու յատուկ քարտեր, որոնց գործածութեան քուտը պիտի ըլլայ 1727:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԵՐ Կ'ԱՌՆԷ ԼԻԲԱՆԱՆԵՒՍՈՒՐԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց յոյն կաթողիկէ Համայնքի Կրէկոս Գ. Լահամ պատրիարքը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ սուրիական օրինակելի յարաբերութիւնները:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ Սուրիա միշտ այ պաշտպանած է Լիբանանը եւ անոր հողերու ամբողջականութիւնը:

Սուրիա տակաւին ամէն ջանքի գործ կը զննէ Լիբանանը պահելու կամ անոր վաշտպանելու լիբանանեան սուրիական միացեալ կեցուածքը արարելու իրաւունքը:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ ամբողջ աշխարհը պէտք է օրինակ առնէ Լիբանան - Սուրիա ամրապնդուած յարաբերութիւններէն, որոնք հիմը կը կազմեն մշակութային, ընկերային, մարզական եւ տարբեր մարզերու բարգաւաճման:

Նախագահ Լահուտ շեշտեց իսուքի պատմութեան, ազգային արժանիքներու, իրաւունքի գորակցութեան եւ ընկերային արդարութեան ապահովումին անհրաժեշտութիւնը:

Հանդիպումին ընթացքին Լահուտ պատրիարք արտասանեց խօսք մը, որուն մէջ արժեւորեց եւ դրուատեց մարտին Համայնքի ընդհանուր ժողովը եւ անկէ բխած որոշումները, որոնք յարմարագոյններն են բարեկարգելու եկեղեցական ծառայութիւնները:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ ընդգծեց պետական նախարար Անէ մ Քանսոն, որուն հետ քննարկեց կառավարութեան աշխատանքներուն առնչուող հարցեր, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ քարիւղի եւ ընդհանուր կազմակերպչական հեռանկարները:

Նախագահ Լահուտի այցելեց Հայ կաթողիկէ Համայնքի պատրիարք Ներսէս - Պետրոս ԺԹ. Թարմունի, ընկերակցութեան Հայ կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Վարդան եպ. Աշգարեանի եւ Հայր Ճորճ Ասատուրեանի:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

Հանդիպումին թարմունի պատրիարք նախագահ Լահուտի ներկայացուց Հաւանի մէջ կայացած կրօնական վեճաժողովին արդիւնքները: Քննարկուած իրադրութիւնը:

ՊՐՐԻ ԿՐ ԴՐՈՒՍԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրըրի երէկ զիտեւ տուաւ, որ կառավարութիւնը թափ տուած է իր աշխատանքներուն, որովհետեւ անոր բոլոր անդամները անխորտիկ սկսած են հետեւել երկրին սահմանադրութեան եւ գործել անոր սահմաններէն ներս:

Պրըրի շեշտեց, որ այս լուրջ աշխատանքը բաւական ուշագրաւ է եւ նկատել տուաւ, որ կառավարութեան յառաջիկայ նիստը պիտի ըլլայ բաւական «լեցուծ»:

Շ. Յ. Դ. ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ԵՐՐՈՊԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Եւրոպական խորհրդարանին կողմէ բուժարկուած Ուսթլանտի տեղեկագիրին բովանդակութիւնը, որ Լիբանանի մասնակցի 13 Յունիս 2003ին կայանալիք Եւրոպական խորհրդարանի ընտրութիւններուն: Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մուրաթ Փափազեան այս առումով րաւ. «Ոչ մէկ (Ֆրանսական) քաղաքական կուսակցութիւն կ'ընդունի բաժնեմեր տեսակէտը թուրքոյ անդամակցութեան պայմաններուն գծով. ոչ մէկ կուսակցութիւն թուրքոյ անդամակցութիւնը կը պայմանաւորէ Հայ կական Ցեղասպանութեան ճանաչմամբ, եւ վերջապէս, ոչ մէկ կուսակցութիւն կ'ընդունի իր ընտրական ցանկերուն վրայ ընտրելի դիրք տալու ծաղումով Հայ քաղաքացիներուն»: Ան ընդգծեց, որ Ֆրանսահայ գաղութը, որ յաճախ կը ներկայացուի իր բոլոր օրինակելի գաղութի, Հարթանանար Համապատասխան նկատառութեան:

Շ. Յ. Դ. ԿՐ ՄԱՍՆԱԿՅԻ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Եւրոպական խորհուրդի 1987ի բանաձեւի 16ամեակին առիթով կայացած երեկոյին ընթացքին յայտարարուեցաւ, որ Հ. Յ. Դ. իր սեփական թեկնածուներով պիտի մասնակցի 13 Յունիս 2003ին կայանալիք Եւրոպական խորհրդարանի ընտրութիւններուն: Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մուրաթ Փափազեան այս առումով րաւ. «Ոչ մէկ (Ֆրանսական) քաղաքական կուսակցութիւն կ'ընդունի բաժնեմեր տեսակէտը թուրքոյ անդամակցութեան պայմաններուն գծով. ոչ մէկ կուսակցութիւն թուրքոյ անդամակցութիւնը կը պայմանաւորէ Հայ կական Ցեղասպանութեան ճանաչմամբ, եւ վերջապէս, ոչ մէկ կուսակցութիւն կ'ընդունի իր ընտրական ցանկերուն վրայ ընտրելի դիրք տալու ծաղումով Հայ քաղաքացիներուն»: Ան ընդգծեց, որ Ֆրանսահայ գաղութը, որ յաճախ կը ներկայացուի իր բոլոր օրինակելի գաղութի, Հարթանանար Համապատասխան նկատառութեան:

«Այս ցաւալի ու անընդունելի կացութեան դիմաց, Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւնը կայացուց մեծ որոշում մը, քաղաքական կուսակցութեան մը վայել ձգտումն էր որոշում մը՝ մասնակցելու Եւրոպական խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն: Այս ձեւով, մենք պիտի կարենանք մեր ձայնը հասցնելու ուղղակի կերպով եւրոպական կառույցներէն ներս, իրատուամիտներուն ու հանրային կարծիքին»: Ան շարունակեց. «Եւրոպական ընտրութիւններուն մենք պիտի մասնակցինք ընտրական յոստակ ծրագրով մը. «Մարդկային Իրաւունք Եւրոպայի» ընդհանուր գաղափարին տակ, թուրքոյ արամադրելով իւրապատու կեդրոնացում: Մենք պիտի ներկայացնենք երկու ցանկեր, նկատի ունենալով նորաձայն ընտրական օրէնքի մատուցած կարելիութիւնները. մէկը՝ Ռոն Ալի - ՓԱ-ՔԱ (Լիոն - Մարսէլ) ընտրատարածքին եւ միւրը՝ Իլ Տը Ֆրանս (Փարիզ) ընտրատարածքին մէջ»:

Ապա խօսք առաւ Ֆրանսայի Հայ Դատի Յանձնախումբի անդամ Սեւան Սերոբեան, որ ներկայացուց վերաձայնուած ընտրական օրէնքի թղթածրարը: Խօսք առին նաեւ Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուհի՝ Հիտոն Չոպոյեան, Ֆրանսահայ կազմակերպութիւններու Համադրիչ խորհուրդի նախագահ Արա Գրիգորեան, Ֆրանսացի երեսփոխաններ՝ Ռոնէ Ռուբէ եւ Քրիսթֆ Մաս, նախկին երեսփոխան՝ Միշէլ Ռիւազի, Եւրոպական խորհրդարանի անդամ՝ Մարթին Մուր Եւ այլ քաղաքական անձնակերպութիւններ: Խօսք առաւ նաեւ Ֆրանսայի մէջ Ռ. Ա. Կի նախագահ՝ Վարուժան Սերոբեան, որ ողջունեց Հ. Յ. Դ. ի այս նախաձեռնութիւնը, բաժնեկրկ ընդգծուած մտահոգութիւնները: Երեկոյի ընթացքին անդամները Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Յարութ Մարտիրոսեանի ելոյթով: Ան իր խօսքին մէջ շեշտեց. «Վաղը առաւօտ իսկ մեր որոշումը կը մտնէ կիրարկման իր առաջին փուլը, իսկ յաջորդ տարի, այս օրերուն, մենք արդէն քննած կ'ըլլանք, թէ ո՞վ մեզի հետ է եւ ո՞վ մեզի դէմ»:

ՄՍԱՅԱՆԸ

«ԱԶԱԿԵՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ» Հեղինակ՝ ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԻՒՆ ԽԱԶԵՐ ԳԱՆՈՒՄՏԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՄԱԿԱՆ ԿԵԴՐՈՒՆ

Երատարակութիւն՝ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՄՏԻՆԱԿՈՒԹԻՒՆԻ ԱԲՏԱՍՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՒԹԻՒՆԻ ՄԱՅՈՑ ՍԵՑԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ, ԹԻՒ 79

Անթիլիաս, 2003

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀՆԵՂԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ

«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻ ԲԵՍԱԴՐԻՉ ԱԹՈՄ ԵԿՈՅԵԱՆԻ ԵՒ ԴԵՐԱՍԱՆՈՒԻ ԱՐՍԻՆԷ ԽԱՆՃԵԱՆԻ ԸՏՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՍԲ Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԱՍՐԻՆԻ

ԶՐՈՅՑ ԿԵ ՎԱՐԸ ԸՆԿ. ԱՐՄԵՆ ԱՊՏԱԼԵԱՆ

Տեղի կ'ունենայ Զորքաբաթի, 2 Յունիս 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Յակոբ Տըր Մելքոնեան քառերարահին մէջ:

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Դ. «Նիկոլ Դուման» կոմիտէն կը գուժէ իր շրջանի հաւատաւոր ընկերներէն՝

ԹԱԴԵՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Յունիս 2003ին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ալիս Թադէոսեան
Տէր եւ տիկին Սեպուհ եւ Մարալ Թադէոսեան եւ զաւակուք
Տիար Գրիգոր Թադէոսեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Ժան եւ Սեդա Համառոնեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Զաւէն եւ Գոհարիկ Սահակեան
Տէր եւ տիկին Պօղոս Մուշեղեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Սարգիս Մուշեղեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Յակոբ Մուշեղեան եւ զաւակուք
Տիկին Սուզան Թորոսեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Վահէ Սահակեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Կարօ Մանուկեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Սարգիս Կէլիքեան եւ զաւակուք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, քեռիին եւ Հարազատին՝

ԹԱԴԵՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆԻ (ՕՏԵԱՂ՝ ՊԵՅՐՈՒՄ, 1929ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Յունիս 2003ին, նաուստեան ժամը 3:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ծաբաթ, 28 Յունիս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Յըրն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը՝ Նոր Ատանա, Թադէոսեան շէնք, Ա. Երազ, Կիրակի 29, Երկուշաբթի 30 Յունիսին եւ Երեքշաբթի 1 Յունիսին:

Նիկոլ Դուման ակումբին մէջ եւս կ'ընդունուին ցաւակցութիւններ՝ այսօր, յետմիջօրէի ժամը 4:00էն 6:00:

● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեսիրական հաստատութիւններու:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Պերճ Կարապետեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Արա Կարապետեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Րաֆֆի Կարապետեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Անդրանիկ Աստուրեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Յակոբ Կարապետեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Պետրոս Մանկիեան եւ զաւակուք
Տոքթ. Կարօ Մանկիեան
Տիար Նշան Մանկիեան
Մարթայեան ընտանիք
Պոլոյեան ընտանիք
Նասրալլա ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ Հարազատին՝

ԱԶՏՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ (ՕՏԵԱՂ՝ 1921ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Յունիս 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ծաբաթ, 28 Յունիս 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Էջմիշի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ծաբաթ, 28 Յունիսին, կէսօրէ ետք ժամը 2:30էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիարեան Պապիկեան» սրահին մէջ, իսկ Կիրակի, 29 Յունիսին, հանգուցեային բնակարանը, Մար Մըլայայէ, «Գառնիկ Ֆարրա» շէնք, 3րդ յարկ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Համբարձում եւ Քնար Գնտոյեան

- եւ զաւակուք
Տէր եւ տիկին Յակոբ եւ Մարի Գնտոյեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Գէորգ եւ Մարալ Գնտոյեան եւ զաւակուք
Տէր եւ տիկին Աւետիս եւ

# ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՎԱՐՁԱՊԵՏ Ռաֆիք Հարիրի երեկ Քորաթե-մի մէջ ընդունեց «Ազգային երիտասարդներ» ու մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ նախկին երեսփոխան Ահմէտ Քարամէի:

Հ ա ն դ ի պ ու մ ի ն քննարկուեցան տեղական եւ շրջանային հարցեր, ինչպէս նաեւ երիտասարդութիւնը յուզող հարցեր: Վարչապետ Հարիրի խօսքին մէջ շեշտեց, որ շրջանային ճնշող պայմաններուն լոյսին տակ հարկ է պահպանել ներքին կայունութիւնը, վերջ տալով բանավեճերուն:

● **ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ** նախարար Միշէլ Սըմահա Գահրի մէջ հանդիպումը մը ունեցաւ երկու կողմէն: Երկու կողմէն լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հետ: Հանդիպումին ընթացքին Սըմահա շեշտեց, որ Լիբանանն ու Սուրիան առաջին երկիրներն են, որոնք պայքարած են ահաբեկչութեան դէմ: Հետագային է, որ անոնց միացած են այլ երկիրներ, որոնք նախապէս օժանդակած են ահաբեկչութեան դառնութիւնը, սկսած են պայքարիլ անոր դէմ:

● ՎՃՌԱԲԵԿ ատեանի ընդհանուր դատարանը Լիբանանի Գերագույն Կոնստիտուցիոնալ Կոլեգիոյ որոշումով, որ այդ դատարանը նորոշութիւն չէ եւ թէ անցեալ Օգոստոսին անկէպ վաւերացում ստացած է խորհրդարանէն:

● ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարար Յարեա Պուէյզ երեկ պահանջեց կառավարութեան վերատեսու-թեան երթարկել քարահատման վայրերու փակման օրինակները, նկատել տալով, որ Լիբանանի արեւելեան լեռնաշղթան

չի բաւարարեց երկրին կարիքը: Նշեց, որ նախանշեալ օրկառավարութիւնը իր ժողովին ընթացքին որոշած էր վերջնականապէս փակել քարահատման վայրերը:

Միւս կողմէ, Պուէյզ քննարկեց նաեւ մագուրով բանող վաներու թղթածրարը վաներու վարորդներու մէկ պատուիրակութեան հետ: Հանդիպումին ատարից Պուէյզ շեշտեց, որ կը զօրակցի վարորդներու պահանջներուն:

● ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարար Յարեա Պուէյզ երեկ պահանջեց կառավարութեան վերատեսու-թեան երթարկել քարահատման վայրերու փակման օրինակները, նկատել տալով, որ Լիբանանի արեւելեան լեռնաշղթան

# ՂԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՍԱՐԻ ՄԱՍԻՆ

Երեկ, երեկոյան ժամը 20:00ին, կազմակերպութեամբ Ս. Գ. Հ. Կ. Տիրունի Ռուսանդական եւ Երիտասարդական Միութեան, Սահակեան - Լեւոն Մկրտիչեան քոլեճի արահին մէջ տեղի ունեցաւ բժշկագիտական նիւթով դասախօսական շափեկան երեկոյ մը՝ ՍԱՐՍԻ մասին:

Համալսարանական ուսանողներու ներկայութեամբ տեղի ունեցած դասախօսութեան գլխաւոր վեկուցաբերն էր Հայկապեան եւ «Էլ. Էյ. Եու.» համալսարաններու կենսաբանութեան դասախօս Ռուլա Հալապի:

Վերջինս համապատասխան բացատրութիւններով ներկայացուց ՍԱՐՍԻ ծագումը, պատմութիւնը, ծախի դիմադրողականութեան հետ կապ ունեցող հարցերը եւ պայն դիմագրաւելու միջոցները: Մօտ մէկ ժամ տեւած մասնագիտական դասախօսութեանէն ետք, դասախօսը պատասխանեց ՍԱՐՍԻ վտանգներուն վերաբերող ներկայներու հարցումներուն:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ՎԵՐԱՓԱՌ ԸՆՏՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ՈՒԹԵՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՉԻՆ ԱՌԻԹՈՎ**

Յառաջիկայ Կիրակի, 29 Յունիս, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարին մէջ, յընթաց Ս. եւ անմահ պատարագի, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ պիտի կատարուի Ս. Աթոռոյս վեհափառ հայրապետին՝

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

Ընտրութեան եւ Օծման Ցրոյ տարեդարձին առիթով

Պատարագէն ետք, վեհափառ հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

## «ՎԱՍՆՆ ԶԱՅՆ»Ի ՎԱՌՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- **Ժամը 8:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- **Ժամը 9:30** Զաղաքական լուրեր/հայերէն
- **Ժամը 10:00** Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորչի Մայր տաճարէն Սրբ. պատարագի ուղղակի ձայնասփռում
- **Ժամը 12:30** Զաղաքական լուրեր/հայերէն
- **Ժամը 1:00** Ազգային-Յեղափոխական երգեր
- **Ժամը 2:30** Զաղաքական լուրեր/արաբերէն
- **Ժամը 2:45** Յունարեւ երգերու ունկնդրութիւն
- **Ժամը 4:30** Զաղաքական լուրեր/արաբերէն
- **Ժամը 6:30** Զաղաքական լուրեր/հայերէն

## «ՎԱՍՆՆ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՈՐՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- **Ժամը 8:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- **Ժամը 8:45** «Աստղեր»
- **Ժամը 10:05** Ձեռնարկային լրատու»
- **Ժամը 11:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- **Ժամը 12:00** «Խոհեր եւ մտածումներ» Ծահանդուխտ
- **Ժամը 1:30** «Մանուկներու աշխարհ»
- **Ժամը 6:00** «Շայ երգաշարի»

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Յառաջիկայ Կիրակի, 29 Յունիս 2003ին, Էշրեֆիի Ս. Յակոբ Եկեղեցոյ մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր Ս. Պատարագ եւ Հայրապետական Մաղթանք

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԵՐԱՓԱՌ ԸՆՏՐԱՊԵՏ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

Ընտրութեան եւ օծման Ցրոյ տարեդարձին առիթով: Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ թեմիս Բարեջան Առաջնորդ՝

**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու հոգեպարար արարողութեան եւ աղօթելու վեհափառ հայրապետի արեւշտութեան եւ քաջաողջութեան համար:

ԴԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՂԱՐԱՆԻ

**Orient plus**  
KHAZAZ TRAVEL & TOURS  
Touch New Worlds

**Jarna**  
\$319

8 days - Direct Charter Flight  
Every Tuesday starting from 8 July

Other Destinations  
Boat Trip to  
Cyprus 3 Days  
Cyprus & Greece  
**\$190 \$425**

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT  
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598  
03.258336, 256254  
www.orientplus.com

Կազմակերպութեամբ  
**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԵԿՈՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Ընկերութեան  
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ**

Մեծարանք  
**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ԱՐԱՊԱԿԱՆ ԲԵՄԵՐՈՒ ԸՆՏՐԱՊԵՏՈՒԹ ԹՄԵՐԱԿԱՆ**

ՍԵԳՐԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ  
Լիբանանեան երաժշտութեան իր բերած քառասուն տարիներու ծառայութեան համար

Երեքշաբթի, 1 Յուլիս 2003, երեկոյան ժամը 8:30ին, «Յակոբ Տը Մելքոնեան» թատրասարհին մէջ:

ԸՐԱԲԵՐ

## HAMAZKAYIN FORUM 2003

Յրդ մասնակցական մշակութային ծառայող շաբաթանոցի մէջ

Պատրաստ էք ամառուայ արձակուրդի ձեր ծրագիրը մշակելու

Մասնակցեցէք Վամազգայինի Ռուսանդակական մշակութային հասարհի՝ երկու շաբաթ տեւողութեամբ:

Այս հաւաքը առիթը պիտի ընծայէ՝

- \* Ծանօթանալու հայ մշակոյթի պատմութեան եւ ասանդութիւններուն:
- \* Հանդիպելու սփիւրջահայ թէ հայրենի երիտասարդ ուսանողներու:
- \* Մասնակցելու այժմեական նիւթեր արծաթող դասախօսութիւններու, մատուցուած ծանօթ հայ մտաւորականներու եւ մասնագէտներու կողմէ:
- \* Զրուցելու եւ միտքեր փոխանակելու հայ երիտասարդութիւնը հետաքրքրող բազմաթիւ հարցերու մասին:
- \* Այցելելու հայկական պատմական կեդրոններ՝ ինչպէս օրինակ թանգարաններ, եկեղեցիներ եւ այլ տեսարժան վայրեր:
- \* Վայելելու տեղւոյն մշակութային, երաժշտական թէ թատերական կեանքը:
- \* Կազմակերպելու մասնակցողներուն իսկ կողմէ՝ եզրափակիչ ամառանալի հանդէս-հաւաքոյթ մը, վերապրելու միասին անցուցած յիշատակելի երկու շաբաթները հայրենի հողին վրայ:

Մանրամասնութեան համար կրնաք դիմել  
Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փալանճեան Ընկերակա, հեռախոս 01- 372455 կամ 03-549917.  
ամէն օր առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ Կ. Է. 4:00 կամ այցելել մեր կայքէջը [www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com)

السفير  
التميز  
الذخيرة  
الاستقبال  
السبق  
السبق  
السبق  
السبق

## ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

27 Յունիսի թիով «Նահար» օրաթերթը յատուկ բաժին մը յատկացուցած է հայ ժողովուրդի պատմութեան՝ «Հայաստանն ու Հայերը» խորագիրով յաւելեալ պոյգ էջերով:

«Հայ ժողովուրդը անբոքէ կաշած է իր պատմութեան, որ սկսած է 5200 տարի առաջ» եւ «Գաղթեցին, սպաննուեցան, կրակներու մէջ մնացին եւ տակաւին ողջ են. փաստեր Հայկական Յեղասպանութեան մասին» խորագիրով յոգնած է հայ ժողովուրդի ծագումին, պատմութեան, Հայկական Յեղասպանութեան, հայ պանդուխտներուն Միջին Արեւելք հասնելուն եւ արաբական երկիրներու մէջ հաստատուելուն:

«Նահար» յոգնածագիրները անդրադարձած են իրանահայութեան, անոնց Լիբանան հաստատուելուն, անոնց ունեցած դերակատարութեան, պանսպան բնագաւառներուն մէջ՝ մշակութային, քաղաքական, ընկերային, առեւտրական, հայրութեան բերանները մինչ: Թերթը նաեւ գրած է Հայաստանի մասին, անոր պատրմական - մշակութային վայրերուն, արժեքներուն, թանգարաններուն մասին, ինչպէս նաեւ լոյս ընծայած է Հայկական Յեղասպանութեան առնչուող փաստերուն:

եւ վաւերագրական տրուեալներուն:

«Տիար» օրաթերթը թարգմանաբար տրուած յոգնածներու կարգին լոյս ընծայած է «Լը Մոնտ» թերթին մէջ Կայծ Միասնեանի ստորագրութեամբ հրատարակուած «Հայաստան - Թուրքիա. Պաղ պատերազմին վերջին սպին» խորագիրով յոգնածը:

Ան անդրադարձած է յոգնած հայ-թրքական երկխօսութեան փորձին, անոր դիմագրաւած դժուարութիւններուն եւ այս փորձը կրկնելու կարելիութիւններուն:

Միջպայիսի եւ իրանահայութեան յուրերու կարգին տեղական օրաթերթերը յուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդի նիստը, Իրաքի տեղեկատուութեան նախկին նախարար Մոհամէտ Սայիտ Սահաֆի Իրաքի մէջ գտնուելու եւ պատկերասփիռի կայաններէն լոյս տեսնելու յոգնածը, պաղեստինեան արմատական կազմակերպութիւններուն կողմէ համաձայնութիւն եւ իսլամադրոշիւն հաստատելու պարագան եւ այլ յուրեր, որոնք գլխաւորաբար կը վերաբերին պաղեստինեան տագնապին եւ Իրաքեան իրադարձութիւններուն:

«Լիոն» գրած է, թէ Կոր. Մէյիտ անուր տեղեկագիրներ եւ յուրեր կը փոխանցէ Խայթաթի դէմ, նախքան վերջինին դատարան ներկայանալը: Նախարարաց խորհուրդը վաւերացուց քարահատման կեդրոններու նախկին ծրագիրը:

Ըստ «Նահար»-ի, փոխվարչապետ Իսամ Ֆարէս չմասնակցեցաւ կառավարութեան ժողովին՝ առ ի բողոք առաջադրուած օրակարգին:

«Տիար»-ի համաձայն, Խայթաթ թղթածրարները կը դնէ դատարանին տրամադրութեան տակ: Չոր. Մէյիտ նոր տեղեկութիւններ կը փոխանցէ, իսկ Ատտուի կը յայտարարէ, որ նիստը պիտի ըլլայ վճռական:

Թերթը նշած է, թէ նախարարաց խորհուրդը երկու օրէն իր նիստը առանց շօշափելի արդիւնքներու:

«Սպասուած Սեպտեմբերի կառավարութիւնը շրջեց բոլոր նախատեսութիւնները ի շահ նախագահ Լահուսի եւ կը սպասուի, որ ընդվուծի ալիք բարձրացալ սար շուրջ», գրած է «Անուար» օրաթերթը:

«Պայրաք» դիտել տուած է, թէ նախագահ Լահուսի պահանջեց վերստին քննարկել թրքարի թիւ 16 յոգնածի շնչումը, որ ընդունուեցաւ նախարարաց խորհուրդին կողմէ:

Իրաքեան իրադարձութիւններուն եւ պարագումներուն մասին «Սահիբ» օրաթերթը գրած է, թէ ընդդիմութիւնը կը սաստկացնէ իր

յարձակումները, պատճառելով 17 ամերիկացի Կոնէր եւ երկու վիրատուներ:

Ըստ թերթին, Սահաֆ կրկին կը գրաւէ պատկերասփիռներուն լուսարձակները եւ կը յայտնէ, թէ ինք պատարձակուեցաւ հարցաքննութեան ենթարկուելէ ետք:

«Անուար» նշած է, թէ Սահաֆ երէցաւ Պաղեստինի մէջ յայտնուած, թէ ամերիկեան փնտրութիւնը կը ինքնաբերաբար մէկ ձեւով վտանգուած է զգալ: Ան նշած է, թէ մօտ օրէն պիտի պատմէ, թէ ինչպէ՛ս Իրաք ինկաւ ամերիկացիներուն ձեռքը:

«Տիար» գրած է, թէ Իրաքի գծով եղած ռուսական - քրիտանական տարակարծութիւնները կը նկատուին անցեալի անհամաձայնութիւններ: Փոքրիկ Բրիտանիոյ մէջ համաձայնութիւններ կը կնքէ եւ գործակցութեան յայն դոնէր կը թանայ, նշած է օրաթերթը:

«Պայրաք»-ի համաձայն, Սահաֆ անակնկալ յօրէն ելոյթ ունեցաւ պատկերասփիռին, իսկ Ռաշիդիլթըն ոչ մէկ ակնարկութիւն կատարեց անոր ձեռքակալութեան ու պատարձակման մասին:

«Լիոն» դիտել տուած է, թէ ամերիկացի պինտուր մը սպաննուեցաւ եւ 13 ուրիշներ վիրատուեցան Իրաքի մէջ կատարուած յարձակումներուն ընթացքին, իսկ պայթում մը պատահեցաւ Կոր. Մէյիտի շուրջը, որ Կոր. Մէյիտի վերջին վարչապետն էր:

«Նահար» յուսարձակի տակ առնելով Սահաֆի յայտնուելու յուրը, գրած է, թէ ան յայտարարեց. «Մի՛նչեւ վերջին վայրկեան պարտականութիւնս կատարեցի»:

Պաղեստինեան տագնապին մասին «Լիոն» նշած է, թէ երկու կողմերուն միջեւ թշնամութիւնը հետզհետէ կը սրի: Երկու նահատակներ արմատաբար ընկաւ եւ Կալայի ռաիկականայեւտներէն մէկուն բնակարանը քանդուեցաւ: Արաֆաթ պինդադու կը յուսայ քանի մը ժամէն, իսկ Ապու Մապէն կը վախնայ, որ Իրաքի շարժումները իսլամադրոշիւններու քարտէսին նկատմամբ իր պարտաւորութիւնները:

«Տիար» դիտել տուած է, թէ կը նախատեսուի, որ պաղեստինեան ընդդիմութիւնը մօտ օրէն երեք ամսուան համար համաձայնութիւն հաստատէ եւ փնտրուի հռչակէ:

«Բիֆաի Արապի» դիտել տուած է, թէ Ռայս Երեւանի կը պահանջէ դէմ դնել պինդադու մերժող բոլոր կազմակերպութիւններուն, իսկ Հասան Երեւանի կը կատարէ «Սահիբ» օրաթերթը գրած է, թէ ընդդիմութիւնը կը սաստկացնէ իր

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ Կիրակի, 29 Յունիս 2003ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի վեհափառ հայրապետ՝

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**


Ընտրութեան եւ օծման Ցրոյ տարեդարձին առիթով, յընթաց Ս. Պատարագի թեմիս եկեղեցիներէն ներս պիտի կատարուի

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ**

Կը հրաւիրենք մեր ժողովուրդը ներկայ ըլլալու հոգեպարար արարողութեան եւ աղօթելու վեհափառ հայրապետի արեւշտութեան եւ քաջաողջութեան համար:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ





# Գրական Էջ

## ԴԱՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐԸ

«Բանաստեղծությունը մեկի ծանօթ բաներու մասին պիտի խօսի, վանտը բացայայտորեն գործածելով իբր խորհրդանշաններ, այնքան ընդհանուր, որ ընթերցողը պատ ըլլայ իր մեկնաբանութեան մէջ, բայց նաեւ այնքան պայծառ, որ ան չխարխալի տեղ ծուծին աղջամուղջին մէջ»:

ՉԱՐԵՀ ԽՐԱՆՈՒՆԻ



Աւելի քան քառասունամեայ բանաստեղծական վաստակի մը ցոյց տալու համար արտասովոր արձակագրութեան խորհրդանշանները, հայ բերրոյութեան մէջ առարկական խորհրդապատկերներու ուղղութիւնը բացած այս բացառիկ դեմքին հատորներուն թիւը բարձրացնելով քսանի: Յանրապարտօրէն, ընկերային եւ այլ լեզուներով արձակագրութեան ունեցող առարկաներու գաղտնիքները բացայայտող իր բերրոյական երախտը իրեն «Քար կաթիլ»-էն մինչեւ նորագոյն հրատարակութիւնը իր ստեղծագործական վաստակին, Ջարեհ Խրանուի ոչ միայն հետապնդեց առարկան մարդկային կեանքի մտաբանութեան եւ բովանդակութեամբ շնչառելու գեղարուեստական ծրագիր մը, այլեւ՝ բանաստեղծութեան նամբով նոյնիման մարդուն ազատագրումը: Արեւմտահայ բերրոյութեան դասական անդամներուն ու արժեքներուն նոր շունչ ու դրոշմ հաղորդած վերոնշեալ հատորները նաեւ՝ ինչպէս հեղինակին նախորդ հրատարակութիւնները, առարկաներուն գաղտնիքները բացայայտելով կը բախանան մարդկային ճամբուն խորհրդանշաններու մէջ: Հոս նոյնպէս առաջին դիրքը կը գրաւեն անշունչ եւ շնչառող քնարական ծանօթ հերոսները բանաստեղծին, ինչպէս ծառը, ձիւնը, հովը, ակնոցը, ծաղիկը, թռչունը, ճեմանակը, շուքը, շուրը, մոմը, դանակը, արձանը, վարդը, նժարը, հայրենիքը, բերդը, բայց մա նաեւ «Քար կաթիլ»-ի հատորին մէջ, մարդկային ու հայկականը համադրելով ներքնատեսական տարօրէն ինքնուրոյն կենսափորձով մը: Եթէ իր բոռնիկներուն՝ Անիին եւ Առնոյին ձօնաւած «Մաղիկներու պէս» հատորին հասարակաց յատկանիշները բերրութեան բնուրէն գունեղանք կենդանութեամբ, օղակներեամբ եւ նոյնիման բուրբուրաներու թմրութեամբ օժտուած գրաւիչ շեշտը, անմիջական հաղորդականութիւնը, հեզասահ թելագրականութիւնը կամ բանաստեղծին լեզուին տարօրէն թափանցիկ գրաւորութիւնն են: «Դասակատարութիւն»-ի էջերուն այս շեշտող պարզութիւնը կը բարձրանայ իմացական բարդ ոլորտներ, համեմատական գուգալիտներու ալիքներով առարկան ու բարձր կը հարստացնէ բազմաշերտ բովանդակութեամբ, աղամանդակու գործութեամբ կ'օժտէ բանաստեղծին բազմախորհուրդ մտայնացումները եւ ընթերցողը կը զննէ տեսանելի առարկային անտեսանելի խորհուրդներու խորքին ի վար թափանցելու հրապուրիչ հրաւերին դիմաց: Բանաստեղծական հեզասահ մ'օտեցումով մը կ'ընչ կերպարանք ստացած դարը, որ աւելի ուշ պիտի ներկայանայ «այս ծառը սուրբ է» կոչումով, անցեալի յայտնատեսութեան լոյսերով տակաւ առ տակաւ կը բացուի ապագայի բաց հորիզոններուն՝ իրեն հետ լայն բանալով գգացումներու եւ մտածումներու ներդաշնակ միահիւստեմով մարդոջացած խօսքին յիշողութիւնը: Աւելի թիշ պիտի ըլլար ըսել՝ կը պարզէ յիշողութեան անհուն հորիզոնները, որ աւելի եւ աւելի կը շեշտեն ոչ միայն բանաստեղծութեան նամբով մարդ ժամանակի բանտէն ազատագրող այս եզակի բանաստեղծին բերրոյական գործընթացը, այլեւ՝ իր կէս դարեան վաստակին ներկայացուցչական հանգամանքով՝ նաեւ հայ մշակոյթին ժուժկալ, սոկուն եւ նպատակասլաց յանրազգաց ուղեւորութիւնը: Դարէ դար բացուող խաղաղարար եւ անդեղեւ հայկեան խոյանք մը, որուն ամենեւնի նորաշունչ ու միաժամանակ նոյնքան դասական ներկայացուցչութեան մէկն է բերրութեան մէկ մի բառին ու շեշտին վրայ աչքի լոյսի պէս գուրգուրացող այս ծանրախոն բանաստեղծը, հայ ժամանակակից բարձրագոյն արդիւն գասական նորարար միջոցառման արդի Ջարեհ Խրանուին...

Ս. ԿՐԱՆՈՒՆԻ



# Դ Ա Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Մ



Լուսնաթափ  
Այսպէս ծնած - տնօրինուած ի վերուստ  
Կամ որոշուած ըստ բախտի  
դիպումներու տարած պիտի հաշիւով  
Կամայական խաղէն անարած պահին տեղին շարժումին  
Եւ ով գիտէ  
Ի՞նչ թաքնամիտ կենդանակերպ պղծեցութեամբ աստղերուն  
Աշխարհ եկած իբրեւ կշիռք երկրուն  
որ կ'ըսես թէ պիտի ինչայ կոտորի կործանի  
Բայց ո՛չ - քիչ վերջ ինքզինք գտած հանդարտած  
Եւ հաստատուած ուղիղ բունին տոհմական  
Առած ինչ որ վերէն տրուած է իրեն -  
Գիծ մը շիտակ, դանակ մը սուր, ցուցիչ սլաք մը անշեղ  
Ու նժարներ փոքր ու սեղմ  
գուցէ կոչուած լոկ աղամանդ կշռելու -  
Արդ պատրաստ է լոյսն ու ստուերը չափելու:

Եւ կշիռ -  
Յանկարծական ջրվէժային վնասներով ու շիթ առ շիթ շահերով  
Աւելի քան եօթանասուն տարիներու խօսք ու գործով ծանրաբեռն  
տոմարի մը հաստատիր  
Քշուող գացող հաշուներեացի հասարակ  
Հաշուեկշիռն էմ ներկայիս անկայուն  
ով որ գիտէ երբ կը փակուի վերջնական.  
Բայց օր մը երբ քաշուի գիծը հաստ ու սեւ  
Վստահօրէն ոչ բաց կու տայ, ոչ ալ վնաս ո՛չ մէկուն  
Այլ միայն շահ՝ անանձնական անապական տեսակի  
Եւ միմիայն ուրիշներու վայելումին մատուցուած:  
Ան հիմա  
Կ'ուզէ քննել հաշուեկշիռն այս դարուն...

Եւ կշիռ -  
Երկու կողմով հաւասարում պիտի ու սէգ  
Կամ ինքն իր գերադրապէս Կասկածական  
ու վերոյէ մը կախուած  
կանոնաձեւ մոգական  
Թէպէտ անգոյ աներեւոյթ անշուշտ  
Լոկ գիրքերով ու թիւերով տարապուած  
Բայց անյեղի ճշմարտութեան անձայն անխօս մունետիկ  
Որ լոյսէն ալ  
Տիեզերքի սուրբ օրէնքներն աշխարհով մէկ կը շեփորէ տիրաբար  
Եւ ուղղադատ կողմնացոյցի մը նման  
Կը բռնէ ղեկն այս մեծ նաւուն բիրականոն ընթացքին:  
Հիմա հարկ է  
Երկու հապար տարեդարձի հանգրուանին բախտորոշ

մէկդի ըրած չար ու բարի իր նախորդները  
Վերանայիլ - ըստ ընդունուած տարապնէրու հիմնական -  
բազմադիմակ կերպարանքին մեր դարուն  
Եւ ի հարկին անոնցմէ մէկն հազցնել  
գուցէ իբրեւ բոնաշապիկ վայելուչ...

Եւ կշիռք  
Երկու թելերու աշխարհն ամբողջ գրկելու պէս երկարած  
Ոտքս կոխած երկրի սրտին բարախուն  
Սլաքս նուրբ ցցած հապարտ արդարութեան սուրին պէս  
Չոյգ նժարներս ավերու պէս բացուած սիրոյն  
ու յարգանքին ամէնուն-

Բայց կռուանիս եռանկիւնը պողպատեայ  
Յենած նոյնքան կարծր ու պնդի ակատ քարին սրբատաշ  
Իր սայրասուր ծայրին վրայ աներեր  
Իբրեւ նոյնքան կարծր ու անարգ դարախոյճին կը կանգնի  
Եւ կը ճնշէ ինչպէս դանակն որ մերկ միսին կը դրուի  
արիւնէլու միտումով  
Եւ ի վերջոյ կ'արիւնէ.

Հիմա ծամն է քննարկումի -  
Դանակիս չափ սրացած  
Ճնշումին տակ աստուածատիպ ակնարկիս  
Կոշկոռ կապած դարուն մարմնէն  
Պիտի ծայրքի թարմ արի՞ւն  
թէ ոչ թարախ ապագայի վարակիչ...

Հիմա տեղն է չափումի -  
Աստուածապօր արդարութեան կշիռքն առած մէկ ձեռքիս  
Եւ միսին ալ հապարումէկ չափանիշ  
Մէկ նժարին ինչ ծանրութիւն որ դնեմ  
Իր պարպուած սկզբներով, հիւծած թմրած ջիղերով  
Պիտի կրնա՞յ միսին նոյնքան ծանրանալ  
թէ ոչ թեթեւ պիտի գայ...

Հիմա կարգն է դատումի -  
Ծանր ու թեթեւ ընելու  
Կշռել չափել Վճռելու  
Աստուածատուր իմաստութեան համաձայն  
Որ կը ցոյց տայ խղճմտանքի հայելիին մէջ անասակ  
Եւ աշխարհի օրէնքներու տարապնէրուն բազմոյթի.  
Արդեօք մեր դարն ո՞ր մէկ պատրաստ տարապնէն է արժանի  
մահապարտի՞ թէ կրկէսի հոսպիտի...

27 - 7 - 1999

## ԱՎՆՈՅՆԵՐ

Ու գիշերին  
Երբ անկողին կը մտնեմ  
Նախ քան գոցելն աչքերս ու լոյսը սնարիս  
Աչքի լոյսիս պէս պահպանեմ  
աչքիս լոյսին պայծառութեան հոգատար  
Չոյգ ակնոցներս կը մաքրեմ  
Լամբարիս տակ կը դնեմ  
որ մութին մէջ - ու մթին  
անդունդն ի վար խոր քունիս  
պիշ պիշ յառին, դիտեն զիս  
նային ինձի՝ ինձմէ ներս...

Ի՞նչ կը տեսնեմ  
Ի՞նչ կ'երեւի  
Մանրանկար հեռուստացոյց պատաստներուն ապակեայ-  
նո՞յնը արդեօք ինչ որ էս  
Տեսակ տեսակ երապներու մէջ կը տեսնեմ - կը մոռնամ  
Կամ կը յիշեմ պատկերներու պէս խուսափուկ ու տարտամ-  
թէ ոչ անոնք՝ յանձնուած  
Գիշերային ոգիներ ու անծանօթ  
- հրեշտակներ սատանաներ մի գուցէ -  
Անոնց նման, անոնց հետ  
Կը սատանին տարաշխարհիկ ոլորտներու սեմերուն  
Կը կայծկլտան դժոխային - եղեմական ապրումներ բոցերով  
- այնքան նման իրարու-  
Կը բարձրանան կամ կ'իջնեն  
Անդրաշխարհի բարձունքներուն - խորքերուն  
- նոյնքան խաւար, նոյնքան լուռ -  
Եւ կը տեսնեն կը փոխանցեն ամէն ինչ  
Չոր էս կ'ապրիմ անդոհայի տագնապներով գալարուն  
մղձաւանջի տարեբային յորձանուտին անձնատուր  
Ու կը մոռնամ նոյնհետայն  
Երբ կ'արթննամ քրտնաթոր...  
Ո՞րն է արդեօք, ի՞նչ է այս -  
Ինձմէ՞ անոնց հաղորդում  
թէ անոնցմէ դէպի ինձ՝  
հոգւոյս խռով ալքերուն...

Առեղծուած - միայն թէ  
Երբ դեռ քնատ՝ ձեռք կ'երկարեմ ակնոցիս  
Կը տեսնեմ թէ փոշուտեր է, աղտոտեր -  
Կարծես թէ ան ողջ գիշերն է գործածուեր...:

11 - 10 - 1998

## ԹՈՉՆԱԾԱՐԱԻ

Առուակը որ կը հոսի  
գլգլալէս  
մերթ խնդալէս, մերթ լալէս  
Յատկոտելով կոշտ քարերուն վրայէն  
ով գիտէ  
քանիներդ՝ սառուցային շրջանիս  
քշուած բերուած իր հունին  
Եւ շոյելով երեսն անոնց  
դարձած ողորկ ու փայլուն  
Կը կարկաչէ միօրինակ  
մերթ մեղմօրօք, մերթ վարար  
Բայց չի գիտեր  
թէ դէպի ո՞ր կը դիմէ  
ինչն՝ ու կ'երթայ հոսանքն ի վար  
Ի՞նչ է վախճանն իր երթին  
Ու չի տեսներ  
թէ թռչնիկը հասակովն իր անհամեմատ աննշան  
թառած հապար հապարամեայ քարի մը հարթ գազաթիւն  
Կը խոնարհի հոսուն ջուրին  
Իր կտուցը կը թաթխէ  
Յետոյ երկինք կը նայի -  
Ան ումպ առ ումպ  
Յաւերժութիւն կը խմէ:  
12 - 8 - 2000, Շրաուֆէն

## ԲԱՆՏԻ ԹՈՉՈՒՆ

Բախտի թռչունն - անունն ի՞նչ է, չեմ գիտեր -  
Ամէն մարդու տալիք մ'ունի անպայման.  
Ոմանց համար կ'ածէ յատուկ ոսկի ձու  
Ոմանց վերէն կը նետէ  
կուտ ու կորկոտ, տեսակ տեսակ սերմնացու  
Ուրիշներու՝ խելք ոյժ կորով  
սէր ու գորով, դէպի վսեմը ձգտում  
առողջութիւն ծայրի պէս  
մարմնի հոգւոյ գեղեցկութիւն, ձիրք բազում...  
Իսկ ոմանց ալ պարպապէս  
գլխուն վրայ կը ծրտէ...

Գալով ինձի, կ'երեւի թէ  
Օրօրոցիս ձեռնակ փետուր մ'է ձգեր  
Փրցումս  
Ճիշդ իր սրտին վրայէն:

8 - 7 - 2000




# Մանկապատանեկան

## ԽԱՂԱՆՔ ԴԼ ՓԻՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Երբ դիփինները չեն որսար կամ չեն քնանար, անոնք կը գրադից յատկապես հնարելով խաղեր:

Դիփինները երկար ժամանակ կ'անցընեն որսալով: Սակայն, երբ անոնք լաւ ուտեն, իրենց կը մնայ քնանալ կամ գրադիլ: Հետեւաբար անոնք կը խաղան: Անոնք կը խաղան իրենց հաճոյքին համար, սակայն նաեւ՝ կեանքը ճանչնալու համար: Իրենց խաղերը իսկական փորձեր են՝ վարժուելու որսորդութեան եւ սորվելու խմբային նուիրապետութիւնը: Այս ձեւով յաճախ իշխող դիփինը կ'ըլլայ առաջին խաղացողը: Երբ ան ձանձրանայ, իր տեղը կու տայ ուրիշներուն: Ժիշդ է, որ ամէն տարիքի դիփինները խաղալ կը սիրեն, սակայն անշուշտ ամէնէն խանդավառները պատիկներն են: Անոնք քեքքիքները կը սորվին՝ երկարօրէն դիտելով ամէնէն տաղանդաւորները:



Նաեւ ցոյց տալ, թէ ո՞վ է ամէնէն լաւը, այն դիփինը, որ կրնայ իրականացնել ամէնէն գեղեցիկ սուզումը, ամէնէն մեծ «սփաշշը»:

Երբեմն դիփինները խումբով ջուրին մակերեսին կը կանգնին պալէ պալէ կանգնելու նման: Հաճոյքէն գատ, այս կեցուածքը իրենց կարելիութիւնն է՝ տայ նաեւ աւելի լաւ տեսնելու:

Դիփինները շատ հաճելի ժամանակ կ'անցընեն երկար ժամեր խաղալով՝ սկսելով իրենց ծնունդէն: Հետագային երիտասարդ եւ չափահաս դարձած դիփինները պիտի շարունակեն իրենց խաղերը, նոյնիսկ եթէ 3 տարեկանէն ետք անոնք նախընտրեն սիրային զբօսանքները:



Այս ժամանակները ընդհանրապէս տեղի կ'ունենան առտուն կամ գիշերը՝ իսկ դիփինները մնացած ժամերը կ'անցընեն քնանալով կամ որսալով:

Դիփիններուն նախընտրած խաղերու ցանկը կ'ընդգրկէ շատ տեսակաւոր լարախաղային ոստումներ: Անոնք կը ցատկեն ամէն տեսակի ձկնէրով: Կռնակին վրայ, լողակները օդին մէջ, ծուծը, ջուրը իրենց պոչով գարնելով... Անոնք կ'ուզեն

Դիփինները կը սիրեն նաեւ որոնել մօտ խաղալ, եւ հաճախ ստանան ծափահարութիւններ իրենց մեծ հաճոյք կը պատճառեն: Սակայն ասիկա նոյն տեսնուածուածութիւնն է, որովհետեւ երբ երիտասարդները իրենց խաղերը «կը ներկայացնեն», էգբերը եւ պատիկները գգուշօրէն կրնան հեռանալ:

Մուծ գոյնով դիփինը ամէնէն ճկուն ծովային ստնաւորներէն մէկն է: Ծնորհիւ իր նուրբ եւ թեթեւ մարմինն, ան կրնայ ցանկի մը մեթր բարձր ցատկել: Սակայն թուր դիփինները շնորհալի լարախաղացներ են: Մեծ դիփինը (թուրսիփ) կրնայ իր հասակէն երեք անգամ մը հեռացուած դիփինները կը դառնան մենակեաց: Ցածախ անոնք են, որոնք

Դիփինները կը սիրեն մարդոց հետ խաղալ: Քանի մը տարի երիտասարդ դիփինները կ'ապրին միասին՝ պատանիներու խումբեր կազմելով: Կարող են հեռացուած դիփինները կը դառնան մենակեաց: Ցածախ անոնք են, որոնք

## ԺԱՄԱՆՅԻ ԶԲԱՂՈՒՄՆԵՐ

Ամբան արձակուրդը սկսաւ: Առիթն է երկար ժամանակ անցընելու՝ ընկերներուն հետ խաղալով եւ գրադելով: Իբրեւ ժամանց կրնաք գրադիլ ձեռքից աշխատանքներով կամ նոյնիսկ համով ուտելիքներ պատրաստելով...

### Ա) ԶԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ - ԾԱՂԿԱՒՈՐ ՇՐՋԱՆԱԿ ՄԸ.



Պէտք ունիս. - Մեծ տուփերու հաստ խաւաքարտի կտորի մը (64 x 20 սմ.), առաւել՝ 4 քառանկիւն կտորներու (20 x 15,5 սմ.), խորովածի 3 փայտէ ցպիկի, 1 խցանի, նայլընէ կանաչ պարանի, զօրաւոր խէժի:

1.- 64 x 20 սմ. խաւաքարտի կտորը ծալէ իրարու հաւասար (16 սմ. լայնք) չորս բաժիններու՝ ձեռնադաշնակի ձեւով:

2.- Իւրաքանչիւր 20 x 15,5 սմ. քառանկիւն խաւաքարտի կտորի կեղտոնը դիր նկար մը եւ գծէ անոր շրջագիծը:

3.- Այդ շրջագիծերը կտրէ երեք կողմի վրայ՝ վերի բաժինը պարպելով, լատիններէն «Ս» գիրին նման ձեւ մը ստանալու համար: Մնացած խաւաքարտի աւելորդ կտորներուն վրայ գծէ եւ կտրէ 15,5 x 3,5 սմ. ութ երկրանի:

4.- Այս «Ս»երը փակցուր ծալուած խաւաքարտի չորս բաժիններուն վրայ՝ ծալքին բաժինը պարպելով: Խաւաքարտէ երկր մը փակցուր իւրաքանչիւր «Ս»ի վերի եւ վարի կողմերուն վրայ:

5.- Նկարներու շրջանակը ներկէ: Կանաչ պարանի կտորներ փակցուր շրջանակին վարի կողմին վրայ: Բարակ խաւաքարտի վրայ գծէ, ներկէ եւ կտրէ ծաղիկներ, տերեւներ եւ թիթեռնիկներ:

6.- Խցանը հինգ կտորի բաժնէ: Իւրաքանչիւրին վրայ անցուր պատիկ ցպիկ մը: Ցպիկին վրայ նայլընէ կտրուած փակցուր ծաղիկ մը եւ մէկ - երկու տերեւ:

7.- Շրջանակին չորս կողմը փակցուր թիթեռնիկները: Շրջանակը խաւաքարտին մէջ անցուր ծաղիկներով ցպիկները:

8.- Շրջանակը պատրաստ է: Անոր մէջ կրնաս դնել քու սիրած անձերու նկարները:

### Բ) ԽՈՂԱԳԻՐ - ՓՈՒՌԻՆ ՄԵՉ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ


Պէտք ունիս - (Իւրաքանչիւր անձի համար) 1 գետնախնձորի, 1/4 չըտտ խոզապուխտի (ժամպոն), կէս հատ լոլիկի, կաղինի, 2 սուրճի դգալ քրեմ ֆրէշի, աղի:

1.- Կաղինները ճզմէ կարկանդակի տախտակէ գլանով մը: Պատիկ քառակուսիներուն վերածէ խոզապուխտը եւ լոլիկը:


## Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ գոյութիւն ունեցող անբնական 11 մանրամասնութիւնները:



Ներկէ՛ հետեւելով նշաններուն:




Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու էնթա արձանները:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

## ԱՅԼԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

• **ՅՐԱՆՍԱՅԻ**, գուրի-ցերիացի եւ ամերիկացի աստղագէտներ նշմարած են տարօրինակ երեւոյթ մը: Երբ անոնք կը դիտէին ԻՏԵԻ ԵՆԿԻՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՒՄԱՍԻՐԷՅԻՆ HD 2094458 աստղին շուրջ դարձող մոլորակ մը, նշմարեցին, թէ ան կը հալէր: Մոլորակը HD 2094458ին այնքան մօտ կը գտնուէր եւ տաքութիւնը այնքան բարձր էր, որ զայն կազմող ամբողջ կազմը կը շոգիանար տիեզերքին մէջ...



լիճերը իրարմէ ըստնող ճամբաները:

• **ԳԻՏԷԻՐ**, թէ իտալացիները միջին հաշուով տարեկան 29,6 քիլո փասթա (սփակեթի, մաքարունի, ...) կ'ուտեն:

կիւ մը կտրած է քսանվեց ժամուան ամէնէն երկար ճառի մրցանիշը՝ երեսուն վեց ժամնոց ճառ մը արտասանելով: Իր այս «մարթոն»ին ընթացքին ժողովուրդը կրնայ արձակուրդը կտրուած անգամ մը կեղծուելու եւ ըստնողները կը լարել քաղաքին տարբեր

• **ԳԵՐՄԱՆԻՈՅ** մայրաքաղաք Պերլինի մէջ յատուկ ներքնապատի պիտի տրուին գորտերը ինքնաշարժներէն պաշտպանելու համար: Այս ձեւով գորտերը կրնան առանց փտանդի կտրել քաղաքին տարբեր

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ / ԵՐԳԱՀԱՆԳԷՍ

## «ՕՓԵՐԱ ԻՆ ՏԸ ՓԱՐՔ» ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Աշխարհի պան-պան քաղաքներու մէջ տեղի ունեցող երաժշտական քաղաքային հանդէսին՝ «Օփերա ին տը փարք» իր փառանքեան տարբերակը տեղի պիտի ունենայ այսօր Երեկոյեան ժամը 8:30ին, կենդանի կազմով Պէյրուի Նահատակացի րապալկի ին վրայ: Լիբանանի մէջ առաջին անգամ տեղի ունեցող երաժշտական այս իրադարձութեան պիտի մասնակցին Լիբանանի Ազգային օփերայի մենթրօ Փեննի Փալաքիս, որոնք թենոր Քամիլ Հաննա եւ պարիթոն Ռոնի Շէյա:

Գ ա ս ա կ ա ն ն երաժշտութեան այս բացօթեայ համերգը, որուն մուտքի տուած սակներուն գինըրը ամէն ինչ անվճար է, որ քաղաքացիներուն, այս նախաձեռնութիւնը նաեւ կը միտի նաեւ ժողովուրդին ծանօթացնել լիբանանեան օփերայի նոր յայտնուող եւ իրենց առաջին քայլերը առնող տաղանդները:

«Օփերա ին տը փարք» յայտնագիրը պիտի ընդգրկէ օփերաներէ արիաներ, Նափոյիթէն երգեր, Պրոտուէյի երգեր եւ դասականացած արդի երգեր: Վերոյիշեալ մենթրօ Պէյրուի կողմէն կ'ընդգրկեն պիտի մասնակցին նաեւ Լիբանանի Ազգային օփերայի անդամները:

### ԱՅՍՕՐ

- Նկարչական ցուցահանդէս՝ Սեդա Մանուկեանի գործերը, «Էմալկո» ցուցասրահ, մինչեւ 6 Յունիս:
- Նուագահանդէս՝ «Օփերա ին տը փարք», Լիբանանի Ազգային օփերայի ելոյթ, ժամը 20:30ին, Նահատակացի հրապարակ:
- Թատրոն՝ Նազիլ Սաուալի «Հէլիսիէն Էլ-Զընգ», ժամը 19:00ին, «Մետիէն» բաղնիքային տարածք:
- Փառատոն՝ «Իրաքի յիշողութիւնը» պատերազմէն առաջ եւ ետք՝ ԵՊՄՍԲՕԻ ցուցասրահին մէջ, մինչեւ 30 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ Ռաուֆ Ռիֆայիի գործերը, «Ժամին Ռուպիլ» ցուցասրահ, մինչեւ 10 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ Մարսելլո Կարգիի գործերը, «Ռոշէն» ցուցասրահ, մինչեւ 15 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն վիուզ», «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Փորթէ տը միւր-գիսիէն տը ճէզ», Կրեթ Նոֆալի գործերը, «Կեօթ» հիմնարկ, մինչեւ 2 Յունիս:

### ՕՂԵՐԵՒՈՅԹ



ՀԱՐԱԹ,  
28 ՅՈՒՆԻՍ 2003  
ՊԵՅՐՈՒԹ  
ՄԱՍՍՍԲ ԱՄՊՈՏ  
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ  
ՅԵՐԵԿ՝ 29°C  
ԳԻՇԵՐ՝ 22°C  
ԿՈՆԱՌՈՒԹԻՆ՝  
71%

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԸՆԿ. ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՖԱՐԵԱՆԻ մահուան քառասունընց առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԱՐԱՊԵՏ ԶԼՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ վախճանման քառասունընց առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ մահուան քառասունընց առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ մահուան Ս. տարելիցին առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐԱՍ ԾԵՎԱԶԻՐԾԵԱՆԻ (մահացած Մ. Նահանգներ) մահուան քառասունընց առիթով եւ ԻՇԽԱՆ ԾԵՎԱԶԻՐԾԵԱՆԻ մահուան յիշատակին, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԼՈՒՍԻՆ ՏՕՆԻԿԵԱՆԻ մահուան Ս. տարելիցին առիթով եւ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ մահուան յիշատակին, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՕՆՆԻԿ ԳՈՒՆՏՈՒՊԻՍԵԱՆԻ (մահացած Լուսնեցի) մահուան քառասունընց առիթով եւ ՏՕՆԻԿԵԱՆ, ԶԷԶԵԱՆԵԱՆ ԵՎ ԹԱԳՈՒՇԵԱՆ ընտանիքներուն ճանաչելու համար, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 29 Յունիս 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

## ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 5473 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- |  |  |
|--|--|
| <p>1. Նորահար - Յօժար, Հաւան:</p> <p>2. Գաղտասեր տունկերու տեսակ մը - Կապրցախ:</p> <p>3. Անգուզական, եզական - Իզական օտար անուն:</p> <p>4. Հեղուով մը՝ այո՛ - Հայկական ամիսներու ժի. օրը - Ճիւղ:</p> <p>5. Կալտոյ եզ:</p> <p>6. Գուլպայ հիւսելու ասեղ - Հաշուագիրք:</p> <p>7. Մարքեան քաղաք - Ժամանց:</p> <p>8. Հնդկահաւ - Մարտունիի գիւղերէն:</p> <p>9. Շաղկապ - Մօր առաջին կաթը:</p> <p>10. Դողալ (հակ.) - Երինջ:</p> <p>11. Նման - Արար իշխան - Կրկնուած ձայնաւորներ:</p> | <p>1. Ծաղկանց լեռնապարի գագաթներէն - Ախորժեղի ճիւղ:</p> <p>2. Ոտնդիր - Աղբասէր ճիւղ:</p> <p>3. Աստուած - Մաքրողական տերեւերով բոյս - Չայնակից տաւեր:</p> <p>4. Շրջի Մաքրի Ֆիլմերէն (երեք բառ):</p> <p>5. Հայ պատմիչ - Այբուբենէն:</p> <p>6. Կոյր - Որոգայթ:</p> <p>7. Այբուբենէն - Օղի խառնակութիւն - Լիբանանի գետերէն:</p> <p>8. Տառի մը անունը - Նախանձի:</p> <p>9. Հիւժած, ծիւրած:</p> <p>10. Մկնահարսնուկ - Մատղաշ:</p> <p>11. Հեղուկ գտելու վայր - Պարտիզպանի գործիք:</p> |
|--|--|

### ԹԻԻ 5472

### ԽԱՉԲԱՌԻՆ

### ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ո	Ր	Գ	Ե	Մ	Ի	Ն	Ս	Ս	Ս
2	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

## ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ն.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ն.
Քուէթեան տինար	5028,00 - 5053,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան դիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական դիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան դիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	247,00 - 257,00 լ.ն.
Անգլիական սթրլին	2490,00 - 2500,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1114,00 - 1119,00 լ.ն.
Թրքական լիրա	106,00 - 106,50 լ.ն.
Կիպրական փաունտ	2940,00 - 2965,00 լ.ն.
Ճապոնական հապար եէն	12,50 - 12,60 լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	12,85 - 12,95 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1110,00 - 1115,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1000,00 - 1005,00 լ.ն.
Եւրօ	1725,00 - 1735,00 լ.ն.

● **ՈՍԿԻ**  
Անգլիական մէկ ոսկի 134,000 - 139,000 լ.ն.  
Իրանեան մէկ ոսկի 120,000 - 125,000 լ.ն.  
Օմանեան մէկ ոսկի 110,500 - 115,500 լ.ն.  
Մեքսիկական փետոս 638,000 - 658,000 լ.ն.  
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 16,620,000 - 16,820,000 լ.ն.  
Մէկ օնս ոսկի 345,00 - 345,50 \$  
Մէկ օնս արծաթ 4,52 - 4,54 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.  
Եւրօ 1.1431 - 1.1438  
Քանադական տոլար 1.3542 - 1.3552  
Չուիցերիական ֆրանք 1.3514 - 1.3524  
Ճապոնական եէն 119.72 - 119.82  
Մէկ սթրլին 1.6531 - 1.6541

● **ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**  
Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում  
Ա. կարգ 4 7/8 4 7/8  
Բ. կարգ 5 5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

## «ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԻՆ ԺԱՄԸ 5:00:

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)**  
Այս շաբաթվերջին ամէն յարմարութիւն եւ արտօնութիւն ունիք պտոյտի երթալու եւ գուարանալու ձեր սիրած անձերուն հետ: Օգտուեցէք առիթէն:
- ☆ **ՅՈՒԻ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Հաշուեցոյցի մը մեծագումար ըլլալը պիտի վնասէ ձեր տրամադրութեան: Պայմանաժամ մը պահանջեցէք, կամ՝ մասնավերալին դիւրութիւն մը: Մի՛ մտահոգուիք:
- ☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Երեկոյթի մը ընթացքին նոր ծանօթագրութիւններ պիտի ունենաք: Ամէն մարդ պիտի համալուծէ ձեր անձով: Օրը նպաստաւոր է ամէն տեսակետով:
- ☆ **ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ընտանեկան յարկի տակ լաւ մթնոլորտ պիտի տիրէ: Այս վիճակին համար պիտի կարենաք ձեր օգտակար մասնակցութիւնը բերել: Օրը պիտի անցնի հանգիստով:
- ☆ **ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Ուրախ պիտի ըլլաք բոլոր անոնք, որոնք արձակուրդի կ'երթան ամառային այս առաջին օրերուն: Դուք այսօր այդպէս պիտի ընէք եւ սքանչելի ճամբորդութիւն մը պիտի ունենաք:
- ☆ **ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Շատ հարցումներ կ'ուղղէք ձեր իրական փափաքներուն եւ պահանջներուն մասին: Օրը շատ յարմար է կատարելու, ըստ ձեր ներշնչումներուն, ձեր բաղձանքները:
- ☆ **ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Արձակուրդի ժամը հնչած է արդէն իսկ: Եթէ օգտուիք այս բախտաբեր օրէն, ձեր ճամբորդութիւնը սքանչելի պիտի ըլլայ: Օրը իրեն հետ պիտի բերէ գուարթ իրադարձութիւններ:
- ☆ **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Կասկածամտութիւնը պիտի պաշարէ ձեզ, ու պիտի կարծէք, թէ ձեր նախընտրութիւնը ճիշդ չէ: Ինքնավստահ եղէք եւ գործադրեցէք ձեր որոշումները:
- ☆ **ԱՂԵՂՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Կը նախանձիք անձի մը տաղանդին, անոր պերճաստեղծութեան միջոցով կ'ընդմիջէք անոր իօսքերը: Ասիկա ազնիւ արարք մը չէ, բայց նոյն տեսն չարիք ալ չէ:
- ☆ **ԱՅՄԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Քանի որ անգաղար կը կրկնէք, թէ ամէն ինչ կրնաք ընել, այսօր մի՛ գարմանաք, եթէ ձեր յանձնարարութեան սակարանը ձեր փոխանակման օրը պիտի անցնի աշխատելով:
- ☆ **ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Ձեր գաւակները կամ ձեր գարմիկները գաւակներ տարէք պտոյտի կամ խաղաղար: Դուք անոնցմէ աւելի պիտի ուրախանաք այս նախաձեռնութեան: Օրը յաջող է:
- ☆ **ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Եթէ կ'ուզէք ձեր տան ներքին կահուորումը փոխել, մի՛ ազդուիք ձեր բարեկամներուն թելադրանքներէն: Դուք էք, որ պիտի ապրիք հոն. ուրեմն կատարեցէք ըստ ձեր նախակին:

## ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 28 Յունիս 1953

### ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՓՈՐՁԵՐ

Եթէ պրպտող աչք մը բան նախաձեռնէր փնտռելու եւ արձանագրելու անունները այն բոլոր պարբերականներուն, որոնք վերջին 40-50 տարիներուն ընթացքին մահուանդ, խմբագրուած եւ հրատարակուած են մեր միջնակարգ վարժարաններուն մէջ, աշակերտներու կողմէ, անկասկած պիտի կրնար կազմել պատկանելի ցանկ մը:

Ամէն ժամանակ եւ ամէն տեղ (վաղեմի Կովկասէն մինչեւ Պոլիս, մինչեւ Երբեմնի շէն ու բարգաւառ հայկական գաւառները ու այսօրուան արտասահմանը) վարժարաններուն մէջ հասակ նետած են երկսեռ պատանիներ եւ երիտասարդներ, որոնք համար գրելը, բան մը արտագրելը ունեցած է անցիմադրելի հրապոյր մը: Շնորհ եւ ընդունակութիւն ունեցող աշակերտներու մօտ պարբերական սովորական շաբաղորութիւնները աստիճանաբար սկսած են իրենց վրայ առնել գրական շուք մը, հոգ չէ թէ տարտամ ու երկչոտ ու քաշալերուած իրենց ուսուցիչներէն, այլ երեսներով անոնց ցուցմունքներուն, սորված են անոնք միշտ բան մը աւելի եւ հետգրեալ, ժամանակի ընթացքին, գատուած են լաւագոյնները սկսնակ լաւերու այդ բազմութեան մէջ:

Այս լաւագոյններուն մէջ ալ, սակայն, քիչերը դիմացած են, երբ կիսաւարտ կամ ընթացաւարտ հեռացած են վարժարանէն: Եւ, տակը տակ, մատի վրայ համրուած են անոնք, որ կենացի մէջ, իրենք ամաթէջօր կամ կոչումով գրող կրցած են անուն մը ապահովել իրենց համար:


Ասիկա կը նշանակէ, թէ դժուար բան է գրելը, դժուար բան է գրող լիարժեքը: Ու պարզ է, որ դժուար պի-

տի ըլլար, բանի որ գրական ասպարէզին մէջ մահուանդ, ընտրեալներու չափ սակաւաթիւ են նաեւ կոչեցեալները: Որովհետեւ գրել կարենալը դեռ ամէն բան չէ գրող դառնալու համար: Գրելը, եթէ կ'ուզէք, արտաքին ձեւէն է լոկ, լեզուն, ոճը, քերականական կառոյցը, եւ այլն. մինչդեռ գրողը, այդ արտաքինը անհրաժեշտօրէն ունենալով հանդերձ, պէտք է ունենայ նաեւ խորք, պեղուած իմացականութիւն, հարուստ մտապաշար եւ թոյլք ու թեւուոր երեւակայութիւն: Այս բոլորը չեն իւրաքանչիւր կամ զարգանք մէկ չնգամէն, նոյնիսկ աստուածատուր ընդունակութիւններով օժտուած տաղանդներու մօտ: Ժամանակը, ուսուցումը ու ինքնաշխատութիւնը են, որ պիտի հասունցեն այդ տարրերը եւ ենթական պիտի դարձնեն անոնցմով ձուլուած ամբողջութիւն մը:

Այս կէտին հասնելու համար դրական հակումներ ունեցողները դեռ աշակերտական նստարաններէն պիտի նետեն անշուշտ իրենց նախաքայլերը: Վարժարանը պիտի ըլլայ անոնց փորձառաջը կամ մարգարայնը, ուր ոչ միայն պիտի աշխատին իրենք իրենց համար, այլեւ տեսակ մը՝ լաւագոյնը տալու եւ լաւագոյնը գտնելու համար լաւերուն մէջ: Մրցում մը, որ պիտի ըլլայ իրենց ստեղծագործական սկզբնական ճիգերուն խթանը: Այնուհետեւ առաջ պիտի անցնին յաջողագոյնները, իսկ միւսները պիտի ջանան հասնիլ անոնց ետեւէն: Այսպէս է օրէնքը կենցախի, եւ այսպէս ալ կ'ընթացան ճիգերը բոլոր ասպարէզներու եւ այդ բոլորին կարգին՝ նաեւ գրական ասպարէզին մէջ

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՏԱՐՆԵՐ



### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ



Երիտասարդուժեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի կրօնի նոր ֆետերասիոնը, ներկայութեամբ նախարարութեան ընդհանուր տնօրէն Զէյնա Նիսամի:

Քննարկուեցան այս մարզածեւր աւելի եւս զարգացնելու հնարաւորութիւնները, որպէսզի արաբական թէ միջազգային գետնի վրայ Լիբանան յաջողի յաւաքողները արձանագրել:

Կրօնի նոր ֆետերասիոնէն բացի նախարար Յովնանեան ընդունեց նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան յանձնախումբի նախագահ Երեսփոխան Էմիլ Էմիլ Լահուտը, որուն հետ քննարկեց մարզական ընդհանուր հարցեր:

### ԹԵՆԻՍ. ՌԻՄՊԸԼՏԵՆ

## Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ



Էնտի Ռոտիք

Ուիմպլըոնի Գ. Հանգրուանի մրցումներուն երէկ լիջտակելի անակնկալներ չպատահեցան, նկատի ունենալով, որ աւելի բարձր դիրքերու վրայ դասուած բոլոր մարզիկները պարտութեան մատնեցին իրենց մէջ աւելի ցած դիրքերը գրաւողները:

Տղոց մրցումներուն, 5րդ դասուած ամերիկացի Էնտի Ռոտիք, երեք սէթի ընթացքին՝ 7-6, 6-4 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց սպանացի իր մրցակիցը՝ 25րդ դասուած Թոմի Ռոմպերտին:

Բաւական տաք եւ հետաքրքրական ճակատումէ ետք 3րդ դասուած գերմանացի Ռայնըր Շուլցը, հինգ սէթի պէտք ունեցաւ պարտութեան մատնելու համար ամերիկացի Թոմ Մարթինը՝ 4-6, 7-5, 6-7, 6-1 եւ 7-5 արդիւնքով:

Աղջկանց մրցումներուն, 2րդ դասուած պելճիքացի Քիմ Բրիսթըլը իր կարգին ապահովեց Գ. Հանգրուանի իր տոմարը՝ 6-1 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելով ամերիկացի Սամանթա Ռիվըրը:

Քրիսթըլը օրինակին հետեւեցաւ նաեւ 4րդ դասուած ամերիկացի Վինչու Ուիլիամսը՝ 6-1 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելով 29րդ դասուած ռուս Նատա Թեթրովան:

Տղոց զոյգի Բ. Հանգրուանի մրցումներուն ամերիկացիներ Պոպ Պրայլը եւ Մայք Պրայլը առանց մրցում կատարելու անցան Գ. Հանգրուան, նկատի ունենալով, որ անոնց մրցակիցները՝ արժանիներ Մարթին Կարսիս եւ Դաւիթ Նալպանտեան չուզեցին մրցում կատարել:

Ստորեւ՝ Գ. Հանգրուանի երէկուան կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.

● **Տղաք**  
Սիենկ Եալքէն (դասուած՝ 8րդ, Հոլանտա) - Վիքթոր Հանսեթ (Ռուսիա) 6-2, 6-4 եւ 7-6  
Փարատոր Սրիշափան (12րդ, Թայլանտ) - Ռաֆայէլ Նատալ (Սպանիա) 6-4, 6-4 եւ 6-2  
Ենաս Պիոթրակ (Շուէտ) - Ճասթին Կիմըլսթոպ (Մ. Ն.) 6-1, 6-3 եւ 6-3  
Մաքս Միլեր (Պիլիպին) - Իվո Քարլովիչ (Սլովակիա) 7-6, 3-6, 6-3 եւ 7-6

● **Սղջիկներ**  
Վերա Զվոնարեւա (16րդ, Ռուսիա) - Իրոտա Թուրիա-կանովա (Ուկրաինա) 6-3 եւ 7-5  
Ալի Սուկիթա (13րդ, Ճապոն) - Նաթալի Տըլի (22րդ, Ճրանսա) 6-4 եւ 6-4  
Լինստէյ Տէվրիֆորթ (5րդ, Մ. Ն.) - Քարա Պլէք (2րդ-սպանիա) 6-2 եւ 6-2  
Փաուլա Սուարէս (Արժանի) - Մայա Մաթեվիլի (Սլովակիա) 5-7, 6-3 եւ 7-5  
Շինուպի Ասակոն (Ճապոն) - Ճրանչեքա Սթրալովիչ (Իտալիա) 7-5 եւ 6-2

### ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՅՐԴ ԽԱՂԵՐԸ՝ ՕԳՈՍՏՈՍ 16ԻՆ

Օգոստոս 16ին Երեւանի մէջ կը սկսին Համահայկական Յրդ խաղերը, որոնց ընթացքին տար մարզախաղերու մրցումներ տեղի պիտի ունենան՝ ֆութպոլ, մինի ֆութպոլ, պասքէթպոլ, վոլեյպոլ, լողարշաւ, ձատրակ, պէտմիւթըն, թենիս, փինկ փոնկ եւ արլեթիկ:

Համահայկական Յրդ խաղերուն ցարդ իրենց մասնակցութիւնը կը բերեն 30 երկիրներու 85 քաղաքներէ շուրջ երկու հազար մարզիկներ:



Պոլիս, Մոսկուա, Ախալքալաք եւ Թեհրան  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Սիտնի, Թիֆլիս եւ Սոլնէչնոկոբ  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Սպահան, Վիեննա, Նինոսմիւտա եւ Հայաստանէն այլ խումբ մը



քարտանի: Ան իր խորին մէջ ըսաւ, որ անկախած այս Յրդ խաղերը նախորդ երկուքէն շատ աւելի լաւ կայմակերպուած պիտի ըլլան, նկատի ունենալով, որ հետպիտէ աւելի փորձառութիւն ունենալով՝ թերացումներ կը արբարուին:

Ստորեւ՝ չորս մարզախաղերուն վիճակագրութիւնը.

**ՖՈՒԹՊՈԼ (տղաք) 20 խումբ՝ 5 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Վելի, Ախալքալաք, Ալմերո եւ Նիկոսիա  
**Ե. ԽՄԲԱԿ**  
Ստեփանակերտ, Պրիքսէլ, Գիւմրի եւ Հոլիվուտ:

**ՎՈԼԵՅԲՈԼ (աղջիկ) 10 խումբ՝ 2 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Վիեննա, Թեհրան, Թիֆլիս եւ Ալմերո  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Սիւսիան, Ստեփանակերտ, Պոլիս, Արթիկ եւ Փասատենա

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը իր գումարած վերջին ժողովին վաւերացուց Լիբանանի ֆութպոլի բաժակի մրցաշարքին կիսաւարտական հանգրուանի դարձի մրցումներուն արդիւնքները, որոնց ընթացքին Օլիմփիք - Սալամ եւ Հ. Մ. Մ. - Նըժմէ մրցումները վերջ գտան հաւասարութեամբ: Հակառակ իրենց արձանագրած այս հաւասարութեան սակայն Օլիմփիք եւ Նըժմէ ապահովեցին աւարտական հանգրուանին իրենց տոմարը, նկատի ունենալով, որ անոնք երթին յաղթանակներ արձանագրեցին:

Անոնց միջեւ աւարտականի մրցումը տեղի պիտի ունենայ Շարաք, 5 Յունիսին, Մարպական Աւանի դաշտին վրայ, երեկոյան ժամը 8:30ին:

Իր ժողովին ֆետերասիոնը կարգ մը մարզիկներ եւ պատասխանատուներ կախակալեց, նկատի ունենալով, որ անոնք ոչ մարզավայել կեցւածք ունեցած էին:

Սալամի պատասխանատուներէն Անթոնիո Մուաուատ երեք ամիսով կախակալուեցաւ, մրցակից կարգին (Օլիմփիք) մէկ պատասխանատու անարգած ըլլալուն համար:

Նոյն պատճառով երեք ամիսով կախակալուեցաւ Օլիմփիքի պատասխանատուներէն Շաֆիք Թահեր:

**ՎՈԼԵՅԲՈԼ (տղաք) 12 խումբ՝ 3 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Գախիբ, Սպահան եւ Լիոն  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Գիւմրի, Սիտնի, Ստեփանակերտ եւ Փասատենա  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Թեհրան, Մոսկուա, Վիեննա եւ Կլենտէյլ

**ՊԱՍԵՔԵԹՊՈԼ (տղաք) 24 խումբ՝ 6 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Կլենտէյլ, Թիֆլիս, Վիեննա եւ Գիւմրի  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Ժընեւ, Պոլիս եւ Մոսկուա  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Վելի, Սալոնիկ, Գախիբ եւ Անթիլիաս  
**Դ. ԽՄԲԱԿ**  
Թեհրան, Լիոն, Սիտնի եւ Փասատենա  
**Ե. ԽՄԲԱԿ**  
Հալէպ, Ախալքալաք, Աղեքսանդրիա եւ Սպահան  
**Զ. ԽՄԲԱԿ**  
Լոս Անճելըս, Թորոնթո, Ֆրանքֆորթ եւ Լաքսաիա

**ՎՈԼԵՅԲՈԼ (տղաք) 10 խումբ՝ 2 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Վանաձոր, Նոր Հաւր, Կլենտէյլ, Թիֆլիս եւ Ախալքալաք  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Թեհրան, Պոլիս, Սոֆիա եւ Ալմերո

**ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼ 20 խումբ՝ 5 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Պոլիս, Երուսաղէմ, Ալմերո եւ Թիֆլիս  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Նիկոսիա, Սիտնի, Մանչեսթըր եւ Սան Փաուլօ  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Թեհրան, Սոֆիա, Վանաձոր եւ Ուսալա  
**Դ. ԽՄԲԱԿ**  
Գիւմրի, Ստեփանակերտ, Հալէպ եւ Վելի  
**Ե. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Մոսկուա, Մարսէյ եւ Գախիբ

**ՊԱՍԵՔԵԹՊՈԼ (աղջիկներ) 12 խումբ՝ 3 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Գախիբ, Սպահան եւ Լիոն  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Գիւմրի, Սիտնի, Ստեփանակերտ եւ Փասատենա  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Թեհրան, Մոսկուա, Վիեննա եւ Կլենտէյլ


**ՊԱՍԵՔԵԹՊՈԼ (տղաք) 24 խումբ՝ 6 խմբակ.**  
**Ա. ԽՄԲԱԿ**  
Կլենտէյլ, Թիֆլիս, Վիեննա եւ Գիւմրի  
**Բ. ԽՄԲԱԿ**  
Երեւան, Ժընեւ, Պոլիս եւ Մոսկուա  
**Գ. ԽՄԲԱԿ**  
Վելի, Սալոնիկ, Գախիբ եւ Անթիլիաս  
**Դ. ԽՄԲԱԿ**  
Թեհրան, Լիոն, Սիտնի եւ Փասատենա  
**Ե. ԽՄԲԱԿ**  
Հալէպ, Ախալքալաք, Աղեքսանդրիա եւ Սպահան  
**Զ. ԽՄԲԱԿ**  
Լոս Անճելըս, Թորոնթո, Ֆրանքֆորթ եւ Լաքսաիա

### ՀՆՈՐԸԱԿԱԼԻԷ

● **Նաճարեան, Հազարեան եւ Թահմալեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց հոր եւ հարազատին՝ ՆՈՒՊԱՐ ՆԱՃԱՐԵԱՆԻ մահուան սուգին:**

### ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՋՏԱՍՏՔԱՄԱՍԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔ

## ՎԱՂԸ՝ ՖՐԱՆՍԱ - ԲԱՍԵՐՈՒՆ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ



ՖԻՖԱԿ Գախազար Սէփ Պլէթըր՝ Բասերունի մարզիկներուն մօտ

ՖԻՖԱԿ նախագահ Սէփ Պլէթըր երէկ յայտարարեց, թէ Բասերունի ֆութպոլի ազգային խումբը վաղը Կիրակի, դաշտ պիտի ներկայանայ Միջամաքամասային ֆութպոլի մրցաշարքին աւարտական մրցումին ճակատելու համար Բրանսայի գէմ, հակառակ անոր որ խումբին միջնապահներէն Մարք - Վիլիէն Ֆոյէ Գոյոմպիոյ գէմ մրցումին (կիսաւարտական) մասնաւոր սրտի տաղանակի հետեւանքով:

Պլէթըր, երէկ Սէնթ Էթիէնի մէջ, հանդիպում ունեցաւ Բասերունի ֆութպոլի ֆետերասիոնի նախագահ Սոհամէտ Իսաչի եւ խումբին մարզիկներուն հետ՝ անոնց ցաւակցութիւն յայտնելու համար: Աւարտական մրցումին մասնակցելու որոշումը իմանալէ ետք, Պլէթըր յայտնեց, թէ 2005ին տեղի ունենալիք Միջամաքամասային ֆութպոլի մրցաշարքը պիտի կոչուի Մարք - Վիլիէն Ֆոյէ անունով, յարգելու համար անոր յիշատակը:

Այսպիսով, 28 տարեկան Ֆոյէ կը դառնայ առաջին ֆութպոլիստը, որ պաշտօնական եւ միջազգային մրցումի մը ընթացքին կը մահանայ, նիկերիացի Սամուէլ Օքուարաթիէն ետք (1989):

Նշենք, թէ Բասերուն - Ֆրանսա աւարտականի այս մրցումը տեղի պիտի ունենայ վաղը «Սթաւ Տը Ֆրանս» (Փարիզ) մէջ, ժամը 22:00ին (Պէլլուսի ժամով): Իսկ Յրդ դիրքի մրցումը՝ Թուրքիոյ եւ Ֆոյոմպիոյ միջեւ տեղի պիտի ունենայ այսօր, Սէնթ Էթիէնի մէջ, ժամը 19:00ին:

### ՖՈՐՄԱՆԻՍ 1

## ՎԱՂԸ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Յորմիւլա 1ի 2003ի աշխարհի ախտեանութեան 9րդ կրան փրին տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի, Եւրոպայի Նիւրպրիւրիկի (Գերմանիա) վազըղիին վրայ: 60 լէփ ունեցող եւ 308,5 քմ. երկարութիւն ունեցող այս կրան փրին տեղի պիտի ունենայ Պէլլուսի ժամանակացոյցով՝ ժամը 15:00ին:

Իր հայրենիքին մէջ տեղի ունենալիք այս կրան փրին վստահաբար մեծ նշանակութիւն պիտի ունենայ գերմանացի Միքայէլ Շուլցի համար, որ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ Ֆեռարիի հետ իր 50րդ յաղթանակ արձանագրելու եւ անշուշտ այդ մէկին շնորհիւ իր ասպարէզին ընթացքին հազար կէտէն աւելի հաւաքելու:

Շուլցի, որ ցարդ այս եղանակին չորս յաղթանակ արձանագրած է, հինգերորդին ալ տիրանալու պարագային աւելիով պիտի ամրապնդէ պարագլուխի իր դիրքը եւ աւելիով պիտի հեռանայ իր զլխաւոր մրցակիցէն՝ Ֆինլանտացի Քիմի Ռայթընընէն: Նշենք, թէ իր ութ փորձերուն ընթացքին, Շուլցի չորս անգամ շահած է այս կրան փրին:

Նշենք, թէ վաղը տեղի ունենալիք այս կրան փրին նախօրեակին, երէկ Ուիլիքմս եւ Պի. Էմ. Տապըլու իրարու հետ իրենց կնքած պայմանագրութիւնը երկարաձգեցին մինչեւ 2009 թուական: Անոնց միջեւ կնքուած պայմանագրութիւնը սկզբունքով կ'աւարտէր յառաջիկայ եղանակի աւարտին:

Ռայթընըն եւ անոր բրիտանացի խմբակից Տէյվիտ Բուլթարտ, այս կրան փրին եւս պիտի մասնակցին իրենց հին ինքնաշարժով, նկատի ունենալով որ անոնց 2003ի ինքնաշարժ առաջին անգամ ըլլալով հրապարակ պիտի իջնէ յառաջիկայ ամիս 20 Յունիսին, երբ Բրիտանիոյ մէջ տեղի ունենայ Միլլըրսթոնի կրան փրին:

Նշենք, թէ այժմ վարորդներուն ընդհանուր դասաւորումը կը պարզէ հետեւեւ պատկերը.

	ԿէՏ
1.- Միքայէլ Շուլցի (Գերմանիա) Ֆեռարի	54
2.- Քիմի Ռայթընըն (Ֆինլանտա) Մարլարըն	51
3.- Ֆեռնանտո Ալոնզօ (Սպանիա) Ռընօ	34
4.- Ռայֆ Շուլցի (Գերմանիա) Ուիլիքմս	33
5.- Խուան Փապլօ Մոնթոյա (Բոլմպիա)	
	Ուիլիքմս 31
6.- Ռուպէն Պարիքելլօ (Պարգիլ) Ֆեռարի	31
7.- Տէյվիտ Բուլթարտ (Բրիտանիա) Մարլարըն	25

Ստորեւ՝ խումբերուն դասաւորումը.

	ԿէՏ
1.- Ֆեռարի	85
2.- Մարլարըն	76
3.- Ուիլիքմս	64
4.- Ռընօ	47
5.- Ճորտըն	11
6.- ՊԱՐ	11
7.- Սաուպըր	8
8.- Ժակուար	6
9.- Թոլոթա	4

### ՀՆՈՐԸԱԿԱԼԻԷ

● **ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց հոր եւ հարազատին՝ ՆՈՒՊԱՐ ՆԱՃԱՐԵԱՆԻ մահուան սուգին:**

